




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7.10.1323.2

-81

3849

9 (47.925)

2-85

2004

47.925
Հ-85

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՈՐՀՐԻՁԹԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊՐՈԼԵՏԱՐԻՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՆԵՐԻ, ՄԻԱՑՆՔ.

ԸՅՈՑ ՀՈՎՀԱՆՆԻՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀՈՒԼԻՍՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

Ա. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արտատպած «Նորք» խանութից



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԴՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1923

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2/12 225/
7-85

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

W'

ԸՅՈՑ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

321

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀՈՒԼԻՄՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

(1005)
91980

Ա. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արտատպած «Նորք» հանդեսից



2/12

ՊՆՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1923

18146

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ

ՀՈՒԼԻՍՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ

Նոյեմբերյան հեղափոխությունը նոր Հայաստանի կազմակերպման առաջին գործողությունը չէր միայն, այլ և հնի կազմալուծման վերջին արարը: Մայիսյան ապստամբությունը բանվոր-գյուղացիական հեղափոխության նախընթաց Հուլիսն էր: Խեղդելով շարժման տարերային պոռթկումը՝ դաշնակցական ուսուցիչական ճանապարհ հարթեց յուրահատուկ կորնիլովշչևյան քեմալական արշավանքի համար: Ռազմական պարտությունը ցուցադրեց խմբապետական ուժի մի անանկությունը: Նախը դարձավ բանվոր-գյուղացիական դիկտատուրայի նախադուռ: Հեղափոխական նոյեմբերին լուսացավ Հայաստանի հապաղած Հոկտեմբերը:

Բարդ ու զարտուղի գործողություններով Հայաստանի հեղափոխությունն ունեցել է նահանջներ ու հարձակումներ, տվել է դավաճաններ և հայտաբերել հերոսներ, կրել է պարտություններ, տարել հաղթանակներ: Փաստեր և յերևույթներ են սրանք, վոր պատմագրողի վերագնահատող խոսքին են սպասում: Սակայն պատմական արձանագրությունների յերեսից դեռ չի իջել հեղինակների բեմական շպարը: Չափազանց թարմ են դեռ անցքերի անմիջական տպավորությունները և տակավին հեռու դատաստանի վերջին որը: Անհրաժեշտ է վերականգնել պատմական ուսուցիչների անխարդախ բնագիրը, նիշել տեսիլների շարահարության ընթացքը, դրսևորել գործողությանց գլխավոր զսպանակները, պարզել հեղափոխական դրամայի հանգույցները: Այդ խմաստով ամեն մի լուսաբանություն արժեքավոր է տակավին վորպես նախափորձ: Սայթաքումներն անխուսափելի յեն, բայց և անհրաժեշտ: Քանի վոր այդ գնով և միայն հնարավոր մշակել կայուն տեսակետ մոտիկ անցյալի գալիք ուսումնասիրությունների համար:

1957-58

Ա.

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

I

Տարորինակ ե ինքնին, վոր հետամնաց Հայաստանում կոմմունիստական պրոպագանդն ու գործը ընդամենը մի կամ յերկու տարվա կազմակերպական աշխատանքի և հեղափոխական պայքարի հետեանքով կարող եր պետական նոր մեքենայի ղեկավար դարձնել Հայաստանի բանվոր դասակարգը, տալ նրա ձեռքը յերկրի շահագործվող աշխատավորության սոցիալ-քաղաքական ճակատագրի տնորինությունը: Իմպերիալիստական քաղաքականություն և ազգայնական բաղխումքների առաջավոր-ասիական խառնարանում, զուրկ գրեթե խոշոր արդյունաբերությունից, մանր սեփականատիրության խարխլված պատվանդանով, անաշխատ սպառողների—գաղթականության և վորքության ծանր բեռը շալակած՝ Հայաստանն, իհարկե, աննպաստ միջավայր եր պրոլետարիատի և իր կուսակցության գերազանցող ազդեցության համար: Սակայն այդ ազդեցության աճման գաղտնիքը պետք ե փնտռել վոչ միայն համաշխարհային հեղափոխության և մասնավորապես Խորհրդային Ռուսաստան ծավալվող ընթացքի մեջ, այլ և մեղձանական Հայաստանի տնտեսական և քաղաքական ներքին փուլզումի մեջ: Համաշխարհային պատերազմի ավերիչ ընթացքն ու ազգային քաղքենիության կորստաբեր քաղաքականությունն ե, վոր հեղափոխության գիրկն են նետում Հայաստանի աշխատավոր բազմությունը՝ հանձնելով սրա ղեկավարությունը փոքրաքանակ բանվորությանը և իր կուսակցության—Հայաստանի կոմմունիստական կազմակերպության—ձեռքը:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դաշնակցական կուսակցությունը, հարդարելով Հայաստանի քաղքենիության հակահեղափոխական ճակատը, արհեստական պատվար կազմեց հեղափոխության հուզվող ալիքների դեմ: Ազգային ֆրոնտ՝ մասսաների ազատագրման դասակարգային պայքարի ղիմաց, նվաճողական պատերազմ և միջցեղային կոտորածներ՝ հեղափոխության ներքին և արտաքին ճակատների ղիմաց: Հայաստանի «անկախ» պետականությունը—ահա կազմակերպական այն գործիքը, վոր իշխանության դենք պիտի դառնար ազգային քաղքենիության ու իր կուսակցության գրեթե յեռամյա տիրապետության ընթացքում: Յերկայրի մի սուր, վոր պիտի բարձրանար հեղափոխության արտաքին գրոհի ու շարժման ներքին հորձանունների հանդեպ:

Սակայն զուր ջանքեր: Հակահեղափոխական խլուրդը սեփական իշխանության հիմքերն եր փորում: Հայաստանն անկախ եր Խորհրդային Ռուսաստանից, սակայն վտասալական կախման մեջ իմպերիալիստական Անտան-

տից: Մերժվում էր Բրեստի դաշնագիրը, վորպես ստրկութեան շղթա, բայց հրամցվում Բաթումի ավելի խայտառակ համաձայնութեանը, վորպես փրկութեան խարխալ: Արդյունքներն ակնբախ են: Հայաստանը, դեռ չը «միացած» — կիսվեց: Նրա ազատ մասը՝ «Արարատյան հանրապետութեանը» ասպարեզ դարձավ յեվրոպական և ազգային բուրժուազիայի քաղաքական շահատակութեանների համար: Իսկ տաճիկ գաղապարի ծանրութեան տակ ընկած շրջանը քարոքանք յեղավ, բնակչութեան աշխատող տարրը գերութեան մատնեց վեց, պարենի պահեստները սպառվեցին: Ոտար զորամասերի հեռանալուց հետո իսկ յերեսի վրա ընկած էր ասպատակված մի յերկիր, վորտեղ գահակալում էր սովը, վարակը, մահացութեանը: Բնաջնջումից փրկվեց յերկրի աշխատավորութեանը հազար ու մի գծավորութեաններով ստացվող և հազար ու մի խարդախութեաններով բաշխվող ամերիկյան ալյուրի շնորհիվ միայն:

Պատերազմն ու ջարդը, արտադրական ուժերի քայքայումն ու քաղաքական սխտեմի կազմալուծումը սաստկանում են ու ծավալվում «միացյալ և անկախ» Հայաստանում իսկ, դաշնակցականների բացարձակ ու անբախտ տիրապետութեան ժամանակ: Հայ-վրացական հակամարտութեանը խելոքում էր արտաքին ապրանքափոխանակութեանը, մաքսային թաւանի անորինակ ձեւեր ստեղծում, բավական և հիշել, վոր Վրաստանը կլանում էր Հայաստանին հասցեագրված ամերիկյան մթերքների 27⁰/₁₀₀ Մենշիկյան Վրաստանը, փակուղի կազմելով Բաթումի ճանապարհին, քաղքենու սահմանափակ ուղեղում վառում էր միայն ծովից ծով փովելու բարեպաշտ հուզը և հրահրում նրա «մարտական յեռանդը»: Աղբիւրների հետ տեղի ունեցող գծութեանների շնորհիվ Հայաստանը կարվում էր նաֆթային աշխարհից, յերկաթուղային հաղորդակցութեանը կանգ էր առնում, գծի բանվորութեանը մատնվում սովի և անգործութեան: Շարուրի և Նախիջևանի կռիւները փակում են Պարսկաստանի ճանապարհը, կրիզիսը սրվում էր արտաքին աշխարհից կտրվող Հայաստանում, մահացութեանը — ճգնում: Սերմացու ստանալու համար Հայաստանն ուրիշ աղբյուր չուներ:

Յերկիրը մեկուսանում և տնտեսական հարադատ պատշանում, անգոր իրադործելու արտադրական ուժերի վերականգնման վորեւ ծրագիր: Տնտեսական վերաշինութեան «մանդատը» նյութական շահ չէր խոստանում յեվրոպական և ամերիկական քեռիներին: Մնում էր, վոր յերկրի տնտեսական վերաշինութեան համար մանդատ ստանձներ նրա վարիչ կուսակցութեանը՝ դաշնակցութեանը: Սակայն ինքնապատասխան ու ինքնամփոփ տնտեսութեան շրջանում վոչ միայն հնարավոր չէր յերկրի նյութական վերաշինութեանը, այլ և անխուսափելի նրա դեգրադացիան: Սեփական արդյունադործութեանից դուրկ և արտաքին շուկաներից կտրված՝ անհնարին էր դառնում բարձրարժեք բույսերի մշակույթը: Իր հերթին՝ վաճառքի հանված բամբակին վաշխառական գներ նշանակելով՝ պետական մենաշնորհը արմատախիլ և անում գյուղատնտեսութեան այդ ճյուղը, ցամաքեցնում էր իսկ վալյուտային ֆոնդի աղբյուրները: Հանգամանք, վոր պիտի սրեր արտաքին առևտրի ճգնանգամը, քայքայեր պետութեան ֆինանսներն ու պարենավորման սխտեմը:

Ջարդերի քաղաքականութեամբ Դաշնակցութեանը կիրառեց ինքնապատասխան տնտեսութեան վարքագիծը նախ և առաջ յերկրի պարենավորման բնագավառում: Ծիշտ և, դաշնակցականների արծարծած տերիտորիալ վեճերը, նրանց վարած արտաքին պատերազմները սկսվում էին և վերջանում յեվրոպական խնամակալների հրահանգով: Սակայն ազգայնական գծութեաններն ու ավերածութեանները, միջցեղային բաղխումներն ու կոտորածները

Հայաստանի վարիչների համար ունեյին իրանց ներքին, «ազգաշեն», իմաստը: Յերկրի բնակչութեան մի մասը մյուսի հաշվին կերակրելու գիշատիչ մի յեղանակ էր այդ, վորտեղ «ազգայնացման» ծրագիրն ու տերիտորիայի նվաճումը միջոց էր, սպառողական արժեքների վորսը՝ նպատակ: Քաղքենի հրապարակախոսութեան այդ ուրերի կոչը դասալքված հայ աշխատավորութեան՝ մտնել «հողի իշխանութեան» գիրկը՝ փարիսեցու զավեշտական մի քարոզ էր, ընդունակ միայն զգարչել տիրող դասակարգի ամենակուլ յերախը: Հայաստանի պետական պարենավորումը, դասակարգային տիրող հարաբերութեանների շրջանակում, տեղի ունեւր միայն արտադրական ուժերի հաշվին, վոր հետին թվով պիտի կործաներ նաև «հողի իշխանութեան» հիմքերը: «Մաքրելով» յերկիրը թրքերից ու քրդերից, «հայրենաբաղձ» մողգնութեանը խեղդում էր Հայաստանի անասնապահութեանը, սպանում բրնձի մշակույթը: Պետութեանը զրկվում էր քոչվորի տուրքից: Հայ և թուրք շրջանների ներքին ապրանքափոխանակութեանը կանգ և առնում: Տեղահան անելով «ղարավոր վոսոխին»՝ քաղքենին տեղահան և անում հայրենի տնտեսութեան դարավոր սխտեմը:

Տեղական ջարդերը, ևազմական և վարչական ապարատի ծանրութեանը քայքայում են ի վերջո նաև հացահատիկների տնտեսութեանը, նետում աղքատացած հայ գյուղացուն սանձարձակ չարաշահութեան ու վաշխառութեան գիրկը, կաբալային պարտքերի տակ դնում նրան կամ առաջնորդում «բարեգործ» միսիոնարների շեմքը: Գյուղական զորքաներից ստացած սերմացուն զարկ և տալիս հողի «կիսովի» մշակման յեղանակին, վոր փաստորեն վեկարանգնում և խոշոր հողատիրութեանը և գյուղի չքավորութեան ճորտատիրական շահագործութեանը: Ջարդերի քաղաքականութեանը միաժամանակ հողային ֆոնդ ստեղծելու ու սակավահողութեան խնդիրը լուծելու գործնական ուղին էր դաշնակցական Հայաստանում: Բնորոշ և, վոր մայիսյան ապստամբութեանից հետո միայն գյուղացիութեանը հիմարացնելու դիտումով կառավարութեանը մտածեց հատուկ հողային մարմիններ ստեղծել, վորոնց վրա պարտականութեան էր դրվում շրջել զավառները և պետականացնել մասնատիրական, վանքապատկան, վակուֆային, յեկեղեցական և... լքյալ հողերը: Հողերի «ազգայնացման» այդ ծրագրի շոշափելի բովանդակութեանը «լքյալ հողերի» հայացումն էր: Բայց «հայացման» այդ քաղաքականութեանը իրագործվում էր մայիսյան ապստամբութեանից առաջ էլ, թեև... առանց հատուկ որենադրութեան: Որենադրութեանը խոստանում էր միայն հաշվի առնել գյուղական ազգաբնակչութեան կարիքը «լքյալ հողերից» կազմված այն ֆոնդների բաշխման ժամանակ, վոր մինչ այդ պարլամենտի դաշնակցական անդամների և դաշնակցական բարձր պաշտոնեյութեան «հայրենի կալված» էր համարվում:

Մակարույձ այդ տարրերի շահատակութեան առարկա յեր մանավանդ նաև ալյուրի և սերմացուի բաշխումը: Սերմացուի փոխարեն գյուղացուց ալյուրի կամ ալյուրի փոխարեն ստացվող սերմացուի խոշոր մասը բաշխումը կամ փոխանակութեանը կատարող պաշտոնյաների ու լիազորների «մասնավոր» յեկամուտի աղբյուրներից մեկն էր: Գյուղացիներին տրվող սերմացուն իսկ հարստահարութեան հնարքների զոհ և դառնում: Մայիսյան ապստամբութեան նախորդին զրի առած «ճամբորդական հուշերում» Նիկոլ Աղբալյանը արձանագրում է, վոր Ախտալում գյուղացիները սերմացու ցորենի փոխարեն զարի էլին ստացել, իսկ Յեկենովկայում տուրքակները միջից թափվում էլին հող, աղբ, հին հեռագիրներ և այլն: «Յերեսան ուրեմն — նկատում և ճանա-

պարհորդը—գալառ և ուղարկում թե փչացած դարի և թե հող ու թուղթ ցանելու համար: Դյուղական կուլակներին սպառնալիքի շնորհիվ ամենուրեք սերմացուն բաժանվում է հավասար, թե աղքատին, թե հարուստին: Կային գյուղեր, վորտեղ հնարավոր էր հազարավոր փթերով ցորեն հանել զորքանների հորերից, մինչդեռ աղքատացած գյուղացիներից շատերը մի կտոր դարի հացի համար մշակութուն էլին անում կամ հող ու արոր թողած՝ «չարչիներին» դասին խառնվում: «Զարմանալի բան—մտորում է նույն Աղբալյանը—պետու- թյունը ռամկավար, կուսակցութունն ու պարլամենտը ռամկավար, պաշ- տոնյությունը ռամկավար և ռամիկի յեզն ու վոչխարը գնում է չնչին գնով հացի դեմ, և մահամերձ յերեսան թքոտ մատով ալյուր է լիզում, չկարենա- լով հաց թխելուն սպասել: Պիտի հասնի վերջապես մի զորեղ բազուկ, հորերից հացը հանելու և գոմերից անասունը և բաշխելու կարիքավորներին: Միթե սեփականութունը թանկ է մարդկային կյանքից և միթե դարձյալ ժանիքավորն է այս աշխարհի տերը, չնայած հանրային և պետական կյանքի խորին հեղաշրջումին» («Հառաջ» 1920, №№ 108, 114):

Ռազմական սխրագործություններն էլին կարծես, վոր պիտի փրկու- թյան ուղիներ հարթեցին դաշնակցական Հայաստանի համար: Զոռոգիական պայքարն էր, վոր պիտի պաշտպաներ Հայաստանի մեղչանականության «ֆի- ղիկական գոյությունը», ապահովագրեր նրա պետական նավը սոսկալի խոր- տակումից: Բայց նույն այդ միջոցներն էլին հենց, վոր յերկարածգելով հին կարգերի կործանման պրոցեսը՝ միաժամանակ նորանոր խորխորատներ էլին փորում Հայաստանի աշխատավոր ժողովրդի առաջ, լիակատար աշխ- սերման ու բնաջնջման մատնում նրա վողջ գոյությունը: Ռազմական հաղ- թանակը նույնքան ճակատագրական էր դաշնակցական բանակի համար, վորքան և ռազմական պարտությունը: Ղարաբաղի ավանտյուրան ավերակ և անմարդի դարձրեց տանյակ հայ գյուղեր և Շուշու հայ քաղաքամասը: Խմբապետական սխտեմի սնանկության առաջին նշաններից մեկն էր այդ: Սակայն Աղբալյանի հարուստ թալանը պակաս կորստաբեր չէր դաշնակցա- կան բանակի համար, քան Ղարաբաղի ավերն ու ջարդը: Մերկ ու քաղցած ծանր պարտությունների հետևանքով, կամ կուշտ ու հղիացած պատերազ- մական ավարի շնորհիվ—զորքը բարոյալքվում էր և՛ ծանր անհաջողություն- ների ժամանակ, և՛ «Ջախջախիչ» հաղթությունների պահուն: Մինչև 32 տա- րին զենքի տակ, համաշխարհային պատերազմի սկզբից կռվի մեջ, նյութա- կան կոշմարային պայմանների ներքո, ցարական ռֆիցերության բլթացող հրամաններին յենթակա՝ Հայաստանի զինվորը կորցնում էր պատերազմելու ֆիզիկական կարողությունը, վատնելով իսպառ «հայրենիքի պաշտպանու- թյան բարոյական մղումը»: Ինքնապաշտպանության բնագոյը նրան ըմբոս- տացնում էր միշտ ավելի և ավելի այն իսկ ռեժիմի դեմ, վորի պաշտպա- նության համար զենքի յեր կոչվել իզուր չէ, վոր Հայաստանի վարիչները՝ փարելով պետականության դրոշին, չհրաժարվեցին, այնուամենայնիվ հին խմբապետական սխտեմից: Հայաստանը կերակրում էր փաստորեն յերկու բա- նակ,—կանոնավոր և կամավորական—վորոնցից և վոչ մեկի մեծությունը չէր համապատասխանում պետության ծավալին ու նյութական կարողու- թյանը: Տարբեր սկզբունքներով կազմակերպված ու տարբեր ազդեցություն- ների յենթակա՝ այդ բանակները չէին հանդուրժում ընդհանուր զեկավարու- թյուն, խանդարում էին մեկը մյուսին, քայքայում և ալյասերում միմյանց ու նսեմացնում այսպիսով պետության ռազմական գորությունը:

Պոկված հողից և աշխատանքից, անընդունակ իքնապատան գոյության,

հալածված թշնամու ուրվականից և միաժամանակ անընդունակ հավաքական գիմադրության՝ հերոսապաշտ քաղքենին խոնարհվում էր առաջնորդների մարակին և լծվում նրանց բախտախնդրի ձեռնարկներին վորպես անմոռնչ պրաստ: Կար նաև հասարակական մի այլ տարր, վոր հավասարապես շահ- վում էր և՛ խմբապետական ասպատակություններից, և՛ վարչական շահատա- կություններից: Հակապետական ծագում ունեցող այս յերկպառակության ողակում էլ հենց գալարվում էր դաշնակցական անոգ և անկար պետակա- նությունը: Յեվ հարկավոր էր միքանի հարված դրսից կամ ներսից, վոր- պեսզի փշրվեր այդ ողակը, տեղի տալով ներհակ ուժերի տարերքին: Բայց թվ էր, վոր կարող էր հասցնել այդ հարվածը:

Հարկավ, վոչ Հայաստանի «գիմադիր» կազմակերպությունները, վոր դրսևորում էին բացառապես տնարույս կամ գաղութային հայ բուրժուազիա- յի և սրան սպասարկող մեղչանական ինտելիգենցիայի տկար ու տարտամ մտայնության նյութանները: «Դիմադիր» հոսանքների—«Ժողովրդական» և «Ռամկավար» կուսակցությունների, Հայաստանի ես-երների ու մենչեիկ- ների—վարած քաղաքականությունը վերջին հաշվով ներդաշնակում էր «մայր կուսակցության»,—Դաշնակցության,—ընդհանուր նկարագրի հետ և միան- գամայն հաշտվում Հայաստանի քաղքենիության ստեղծած այն ընդհանուր ռեժիմի հետ, վորի հետևողական արտահայտիչն ու դրոշակակիրն էր նույն այդ Դաշնակցությունը: Հայ քաղքենին ամենից շատ յերկյուղ ունեւ բոլշևի- կյան վարակից ու ներքին «անարխիայից»: Ծառանալ այդ յերկյուղի դեմ կարող էր միայն Հայաստանի հակահեղափոխության մարտական կազմա- կերպությունը—Դաշնակցությունը: Անգլո-սամերիկյան իմպերիալիզմի կամ ռուս բոլշևիզմի փրկականների հայ գործակալները, Զերնովի կամ Պոտրեսովի հայ աշակերտները կռվում էին բացառապես միմյուստրական պրոտֆեկների համար: Սակայն նրանցից և վոչ մեկը չէր հրաժարվում «մայր կուսակցու- թյան» հետ կենակցելու մտքից: «Վտանգի» պահուն նրանք կազմում էին աղբալյան մի ճակատ: Զրահավորվելով հայերի «ֆիզիկական պաշտպանության» համար՝ հետապնդում էին փաստորեն ընդհանուր մի նպատակ՝ հավերժացնել հայ քաղքենիության և հայ բուրժուազիայի սոցիալ-քաղաքական տիրապե- տությունը, փռելով չորս դին նոր ամայնություն ու նոր սարսափ:

Կոմմունիստական կազմակերպությունն ու բանվորական շարժումը— ահա այն իրական ուժերը, վոր խորացնում էին դաշնակցական Հայաստանի ներքին պառակտումը, արագացնում նրա քայքայման պրոցեսը: Այդ ուժերն էլին միաժամանակ, վոր ձգողական կենտրոն կազմելով Հայաստանի հարըս- տահարվող մասսաների համար, նեխվածության այդ մթնոլորտում հարթեցին նրանց առաջ պայքարի և աղատաբեման կենտրոն ուղիներ:

Բանվորական շարժումը Հայաստանում սոցիալական խոշոր յերևույթ չէր ինքնին: Դրան համապատասխան սահմանափակ պիտի լիներ նաև այդ շար- ժումը զեկավարող կուսակցական կազմակերպության մարտական գորու- թյունը: Հաղորդակցության այլ և այլ ասպարեզներում աշխատող բանվո- րությունը կազմում էր Հայաստանի հեղափոխական շարժման առաջադա- ղունը: Յերկաթուղագծի, պոստ-հեռագրատան, ռադիո-կայանի և գարաժի բանվորները կազմում էին միաժամանակ կոմմունիստական կազմակերպու- թյան ամենաուժեղ բջիջները: Սրանցից զատ յեռանդուն աշխատանք էլին տանում զինվորական և յերիտասարդական խմբակցությունները՝ զորական և քաղաքային կենտրոններում: Մոտավոր հաշվով կազմակերպության մեջ մտնում էին Յերևանի գավառում 200 անդամ և թեկնածու, Նոր-Բայազետի

գաւառում 60—50, Իջևանի և Դիլիջանի շրջաններում 150—200, Ալեքսանդրապոլի գաւառում 200, Ղարսի և Սարիղամիշի շրջաններում—100 և այլն: Կառավարութեան ըստերևութիւն արտակարգ մտահոգութեան չէին պատճառում այդ թիւերը և կոմմունիստական կազմակերպութիւնը, վոր սկսել էր իր մասսայական աշխատանքները Հայաստանում 1919 թվի ամառվանից, «Էռնեմ գործելակերպով» նվաճել էր կիսաւեգալ աշխատանքի հնարավորութեանները: Այդ հնարավորութեանները չքացան միայն 20 թ. հունվար ամսի վերջերից, հատկապէս փետրվար-մարտ ամիսներին, յերբ կարմիր բանակի մերձեցումը Անդրկովկասի սահմաններին ջղայնացնել սկսեց տեղական մտնորայեութեանների վարիչներին ու նրանց յեւրոպական խնամակալներին: Սկսվում են վարչական հալածանքներ, վորոնց կառավարական հայտարարութեանը տալիս էր պրովոկացիոն բացատրութեան: «Ոգտվելով պարենավորման ծանր վիճակից—հայտարարում է պաշտօնական հաղորդագրութեանը—կոմմունիստները գրգռում են մասսաները: Նրանք, հետեւելով կուսակցական դիսցիպլինային, դաշն են կապել թյուրքական նացիոնալիստների հետ, վորոնք Հայաստանով պիտի անցնեն և խփեն Դենիկինի թիկունքին»: Այդ հայտարարութեանն արդեն իսկ անդորութեան մի փաստաթուղթ էր, վոր գալիս էր միայն արձանագրելու հեղափոխութեան անող վտանգը:

Կուսակցութեանը չը լքեց պայքարի ասպտրեզը: Նկուղային աշխատանքի պայմաններում այն հարկադրված յեղավ կրկնապատկել ղեկավարների յեռանդը: Ճիշտ է, հաղթելու համար յերկրի ներսում չափազանց թույլ էր կուսակցութեան սոցիալական զսպանակը: Սակայն քաղքենի Հայաստանի ներքին լքումը բարձրացնում էր յերկրում հեղափոխութեան տեսակարար կշիռը, ընդարձակում նրա մասսայական ներգործութեան շրջանը: Կարմիր բանակի ծավալվող ալիքը, վորպէս արտաքին գործին, տարերային ուժ էր հաղորդում յերկրի ներսում սկսված պայքարին: Յեւրբ պիտի խփեր հաղթութեան ժամը հայտնի չէր, բայց զգացվում էր, վոր հեռու չէ այն: Իսկ մինչայդ անհրաժեշտ էր կարգի բերել կուսակցութեան առաջնապահ գնդերը, վարժեցնել նրանց այն ներքին պայքարի մեջ, վոր պիտի պատուեր Հայաստանի աշխատավորութեան մեկուսացման քողը և ապահովագրեր նրան լիակատար դասալքման սպառնալիքից:

II

Հայաստանի յերկաթուղու բանվորութեանը կազմում էր հեղափոխական գործի վողնաշարը: Յերկաթուղին արդյունաբերական ամենախոշոր ձեռնարկութեան էր յերկրում, և այդ ձեռնարկութեան մեջ զգալի տոկոս էին կազմում 1918—19 թ. թ. հետո Աղբրեջանից փախած այն բանվորները, վոր անցել էին արդեն հեղափոխութեան փորձառութեան բովից, և Բագվի առաջին խորհրդային իշխանութեանից հետո ճաշակել Դաշնակցութեան հակահեղափոխական գործունեւթեան սեպտեմբերյան պտուղները: Կար նաև այն հանգամանքը, վոր Հայաստանի յերկաթուղու վրա ևս անդրադառնում էր ակնբախ կերպով տիրող սեփմի ալլանդակութեանը: Կաշառքն ու կողոպուտը, չարաշահութեանն ու պետական գույքի վատնումը, տնտեսական մեխանիզմի փլուզումը և, դրա հետևանքով, բանվորների նյութական ծանր դրութեանը—այդ բոլորը զեռ 18 և 19 թվերին առաջացրեց զծի վրա մասսայական արտունջ, վոր շուտով բողբոխ և մասնակի գործադուլներ էին կերպարանք ընդունեց:

Բանվորական այդ շարժումը աճում էր և ծավալվում հատկապէս Ալեքսանդրապոլում, վոր հաղորդակցութեան միակ հանգույցն էր կազմում և Հայաստանի բանվորութեան գլխավոր մարտկոցը: Ալեքսանդրապոլի պրոֆեսիոնալ միութեանների խորհուրդը, բանվորութեան կազմակերպչական կենտրոնը՝ հետզհետե հեղափոխական պայքարի հենարան դարձավ: Մեծամասնութեան կազմելով խորհրդի մեջ, կոմմունիստներն իրանց ձեռքն առան Ալեքսանդրապոլի պրոֆեսիոնալ շարժման և դրա հետ միասին Հայաստանի յերկաթուղային բանվորութեան հեղափոխական պայքարի ղեկավարութեանը:

Մինչև 19 թվականի վերջերը պայքարը պտտվում էր բացառապէս բանվորութեան տնտեսական պահանջներ շուրջը: Պարենավորման ճգնաժամը և պետական պահեստների, վատնումը՝ կառավարական պաշտոնեյութեան ձեռքով, քաղաքական բնավորութեան էին տալիս այդ պահանջներին: Դրան ավելանում էր կառավարական որդանների միջամտութեանը արհեստակցական միութեանների վարչութեանց ընտրութեան գործում, վոր ավելի ևս սաստկացնում էր բանվորների կուտակված դժգոհութեանը: Նույն թվի ղեկավարներին Ալեքսանդրապոլի ղեկույի բանվորական սեկցիայի ընտրութեան ժամանակ դաշնակցականները պարտութեան կրեցին: Հունվարի 3-ին բանվորների տնտեսական պահանջները ճնշելու և կոմմունիստների ազդեցութեանը չեղոքացնելու նպատակով միլիցիան ձերբակալում է և գաղտնորեն Ղարաքիլիսա քաղաքում յերկաթուղու բանվորութեան կոմմունիստ ղեկավարներին յերկուսին՝ Յեգոր Սեյանին և Լեոն Ուլիբեկյանին: Դեպոյի բանվորներն այդ ակտին պատասխանում են գործադուլով. առաջարկում են արձակել ձերբակալվածներին և բավարարել առաջադրած տնտեսական պահանջները: Հունվարի 6-ին Ալեքսանդրապոլի կայարանում բռնցքամարտ է տեղի ունենում բանվորների և յերկաթուղու միլիցիայի միջև: Հակապետական հայտարարելով բանվորների ընթացքը, միլիցիան ձերբակալում է 14 հոգի բանվորներ և ուսանողներ: Կատարված ղեպքերի առթիվ բողբոխ ձայն են բարձրացնում առանձին միութեանները և ամենից առաջ Շիրակի գյուղացիական միութեան վարչութեանը: Այդ բողբոխներն միանում են նաև Ալեքսանդրապոլի արհեստակցական միութեանների խորհուրդը: Սակայն կառավարական ագենտները մնում են անդրդվելի: Այս փաստերն արձանագրող կոմմունիստական «Ալիք» թերթի անդրանիկ համարը փակվում է, խմբագրութեանը տուգանվում: Թերթի վարիչներին հայտնագործելու դիտումով ձերբակալվում են անգամ լրագրավաճառ յերեսաները:

Բանվորների բողբոխ ճնշվեց, քանի վոր յերկաթուղային ծառայողների արհեստակցական միութեան վարչութեանը—կենտրոնական կամիտեն—վոչ միայն պաշտպանութեան տակ չառավ ղեկույի բանվորներին, այլ և, ինչպէս պարզվեց, ձերբակալութեաններն իսկ կոմիտեյի նախագահի և անդամներից վոմանց ցուցմունքով էին կատարվել: Նման միջոցներով դաշնակցականներին հաջողվեց հունվար ամսին կայացած կոնֆերանսի ժամանակ, վորին հրավիրված էին բացառապէս դաշնակցական սեկցիաները, վատահոթեան քվե ստանալ հին վարչութեան համար: Սակայն դրան ի պատասխան յերկաթուղագծի արհեստակցական միութեան սեկցիաների մեծ մասն անվստահութեան հայտնեց կոմիտեյին ու հարեց Ալեքսանդրապոլի ղեկույի բանվորական սեկցիային, վորի վարչութեանը բացառապէս կոմմունիստներից էր կազմված:

Բանվորական մասսաների այս նոր խմորումն է, վոր յերկաթուղագծի վրա հեղափոխական հանգույց ստեղծեց գալիք ուրերի համար: Կենտրո-

նախկան կոմիտեի իրավասութիւնը չճանաչող յերկաթուղային բանվորները իրանց ներկայացուցիչներն ուղարկեցին Ալեքսանդրապոլի պրոֆմիութեանց խորհուրդը: Խորհրդի մեջ ուժեղացավ կոմմունիստների ազդեցութիւնը: Բնական հետզհետեւ այստեղ ևս զբաղմունքների կենտրոնը տնտեսական խնդիրներէջ փոխադրվում էր քաղաքական հարցերին: Մարտ-ապրիլ ամիսների ընթացքում խորհրդի նիստերին քննութեան առնվեցին յերկաթուղու բանվորներին հուշող խնդիրները: Վորով միանգամայն հեղափոխական ճանաչարհի վրա դրվեցին խորհրդի աշխատանքները: Բողոք բարձրացնելով դաշնակցական կամայականութիւններին դեմ, խորհրդի ընդունած բանաձեւը պահանջում էր արձակել բանվորների ձերբակալված ղեկավարներին և պատասխանատվութեան կանչել բանվորների վրա բռնութիւն գործադրողներին: Պրոֆմիութեանների խորհրդի ազմկահույզ նիստերը կոմմունիստների ծափալովող ազդեցութեան հայտարար պիտի համարվէին: Ապրիլի կեսերին գումարված յերկաթուղային բանվորների կոնֆերանսում կոմմունիստ պատգամավորները կազմում էին ուժեղ ֆրակցիա: Տատանվող տարրերը հակվում էին կոմմունիստական ֆրակցիայի կողմը: Կոնֆերանսն անցնում էր կուսակցութեան ղեկավարութեան ներքո: Կոնֆերանսն անընդունակ էր շարունակել աշխատանքը: Յերկար ձեռնվում է մանավանդ բանտարկված կոմմունիստների խնդիրը: Նիստերը ձգձգվում են զրեթե մինչև ամսի վերջը: Դաշնակցականները փորձում են ճնշում գործ դնել առանձին պատգամավորների և ամբողջ կոնֆերանսի վրա: Կոնֆերանսի նիստերի սրահը շրջապատվում էր միլիցիայի մարդկանցով: Սկսվում են ձերբակալութիւններ: Կոմմունիստ պատգամավորներից մի քանիսին քաղաքից հեռանալու առաջարկ է արվում: Յերկար ունենալով, վոր կոնֆերանսը կարող է ընտրել կոմմունիստական վարչութիւն, մանդատների ֆարքիկացիայի ճանապարհով դաշնակցականները ուժեղացնում են իրանց ֆրակցիան: Զեղծումը հայտնադործվեց, վորից հետո դաշնակցականները ցրվում են կոնֆերանսը և որսորդեցիկայի միջոցով խափանում միութիւնների խորհրդի աշխատանքները: Այս հանգամանքն արգելք չեղավ, վոր մայիսմեկյան տոնի առթիւ խորհրդի և բանվորական տան վարչութեան անունից թուղթիկ բաց թողնվել սովետական լոգոնգնելով: Կառավարական ագենտները գրավեցին թուղթիկը և վերսկսեցին կոմմունիստների ձերբակալութիւնը: Բայց դեռ նախորդ օրը լուր էր հասել Յերևան Ադրբեջանի սովետիզացիայի մասին, վորից հետո ներքին գործոց մինիստրութիւնից կարգադրութիւն յեղավ արձակել ձերբակալվածներին և նույնիսկ՝ արգելք չհանդիսանալ հաջորդ օրը կայանալիք կոմմունիստական շքերթին:

Պրոֆմիութեանների ներքին պայքարը չէր պարփակվում բանվորական կազմակերպութիւնների նեղ շրջանակներում: Պրոֆխորհրդի աշխատանքներին մասնակցող ընկերներից մեկի վկայութեամբ, իր գործունէութեան վերջին շրջանում խորհուրդը վերածվել էր «Հայաստանի բանվորական պարլամենտի», վոր իր հաճախորդների քանակով մրցել կարող էր Յերևանի ղեղին պարլամենտի հետ: Խորհրդի նիստերին կայարանի շրջանից շտապում էին ներկա գտնվել յերկաթուղային բանվորները և քաղաքից դուրս գտնվող բերդի ու զորանոցների զինվորները: «Հայաստանի բանվորական պարլամենտի» նիստերին ներկա գտնվող այդ զինվորների համար Ալեքսանդրապոլի պրոֆխորհուրդը քաղաքական դատարարութեան դպրոց դարձավ: Այդ դպրոցը հաճախող զինվորներն էին: Վոր վերադառնալով զորանոցները, հեղափոխական տրամադրութիւն են ա-

ղորդում իրանց ընկերներին, վառ հետաքրքրութիւն առաջացնում դեպի ընթացիկ անցուղարձերը: Կոմմունիստական կազմակերպութիւնը փորձեր է անում կապ հաստատել զորանոցների հետ և իր ձեռքն առնել զինվորական մասսաների քաղաքական ղեկավարութիւնը: Ալեքսանդրապոլի կայարանում կանգնած «Վարդան Զորավար» զրահապատը, վորին պետ էր կարգված կապիտան Մուսայելյանն, ընկնում է կուսակցութեան անմիջական ազդեցութեան տակ: Զրահապատը միջնորդութիւն է հարուցանում ձերբակալված կոմմունիստներին ազատելու համար: Աճող հեղափոխական տրամադրութիւնն անցնում է անգամ փողոց, արձագանգ գտնում ժողովրդական լայն մասսաների մեջ: Ապրիլի 23-ին քաղաքային տան առաջ տեղի ունեցավ ժողովըրդական մեծ միտինգ: Հավաքված ամբոխը հաց էր պահանջում և պատիժ հացի տոմսերը յուրացնող պաշտոնյաներին: Քաղաքային վարչութիւնը փորձ արեց ցրել միտինգը միլիցիայի միջոցով: Սակայն հուշված ամբոխը սպառնաց զորքի ոգնութեան դիմել: Սպառնալիքն ազդեց, միլիցիան յետ քաշվեց:

Մասսաների տրամադրութիւնը հետզհետեւ ավելի վորոշ քաղաքական գունավորում ստացավ: Կարմիր բանակը, դուրս վանելով հակահեղափոխութեան վերջին ուժերը Հյուսիսային Կովկասից և Դաղստանից, մոտենում էր Ադրբեջանի սահմաններին: Այդ հանգամանքը վոչ միայն ուժ էր տալիս Հայաստանում աճող հեղափոխական տրամադրութիւններին, այլ և տալիս էր նրան քաղաքական վորոշ ուղղութիւն: Ալեքսանդրապոլի պրոֆմիութեանների խորհրդի ապրիլյան նիստերից մեկում բանվորական խորհրդներ կազմակերպելու առաջարկ դրվեց: Դաշնակցականները խանգարեցին նիստը, և այդ յեղանակով որակարգից հանվեց կոմմունիստների խմբադրած համապատասխան ռեզոլյուցիայի քվեարկումը: Հայաստանի կոմմունիստական կազմակերպութիւնների լոգոնգները անցնում էին սակայն աշխատավոր բազմութեան: «Ռուսական որիննտացիայի» ծավալվող ուժը մասսաների մեջ աճող հեղափոխական տրամադրութիւնների արտահայտութիւնն էր, վոր բնականորեն պիտի վեր հանվեր առևտական հակահեղափոխութեան կրած պարտութիւնների պահին: Բնորոշ է, վոր հաշվի առնելով մասսաների այդ տրամադրութիւնը, Ռուսեն Փաշայի գործակալներից մեկը ապրիլի 20-ին գրած նամակում առաջարկում է՝ կամ վճռական գործողութիւններ սկսել կոմմունիստների դեմ, կամ, կանխելով նրանց, խորհրդային կարգեր հաշակել յերկրում: Այլ կերպ, հարում է նամակագիրը, տիրող կուսակցութիւնն անկարգ պիտի լինի պահել իր ձեռքում իշխանութեան ղեկը: Հայաստանի դիկտատորը փութկոտ լինելու շարժառիթ չունեւ հարկավ: Սակայն Հայաստանի մասսաները պետք է հայտարարեցին շուտով այնպիսի փութկոտութիւն, վոր գերազանցում էր հեռատես իշխանավորների ու նրանց հավատարիմ սպասավորների բոլոր յենթադրութիւնները:

III

Ապրիլի 28-ին Ադրբեջանում տապալվել էր մուսավաթական կառավարութիւնը, տեղի տալով ռազմահեղափոխական կոմիտեին: Բազմից ստացված այս լուրը Հայաստանում ժողովրդական մասսաների հեղափոխական խանդավառութեան աղբյուր դարձավ: Մուսավաթական Ադրբեջանի գոյութիւնը՝ արդարացնող արդումնատ էր դաշնակցական դիկտատուրայի համար: Ադրբեջանում տեղի ունեցած բանվոր-զյուզացիական հեղափոխութիւնը

անիմաստ եր դարձնում դաշնակցականների գոյությունը և առաջ քաշում Հայաստանի սովետիզացիայի խնդիրը:

Սովետիզացիայի խնդիրը պարտավորել էր ամենից առաջ Կոմմունիստական Կուսակցութեան Հայաստանի Կոմիտեի—Արմկոմի—համար։ Հայաստանի Կոմմունիստական կազմակերպությունների գաղտնի կոնֆերանսը, վորտեղի ունեցավ Յերևանում 1920 թվի հունվարին, ընդունել էր թեզիսներ այն իմաստով, վոր Կարմիր բանակի մերձեցման և հարևան հանրապետություններում հեղաշրջում լինելու դեպքում պետք է առաջադրել Հայաստանի սովետիզացիայի խնդիրը։ Վերահաս դեպքերը հարկադրում էին նախապատրաստական քայլեր անել այդ ուղղությամբ։ Հայաստանի Կոմիտեն յենթադրում էր, վոր Ղազախն ու Ղարաբաղը, վորպես սահմանակից շրջաններ, հեղաշրջման հենակետներ պետք է դառնային Հայաստանի համար։ Գալիք ապտամբությունը պետք է սկսվեր Իջևանի շրջանում, վորտեղից այն արձագանգ պիտի գտներ ամբողջ յերկրում։ Իջևանի վրայով յենթադրվում էր կապ հաստատել Բազվի ռազմահեղափոխական Կոմիտեի հետ, վոր ողնական ուժ պիտի մատակարարեր Հայաստանի սովետիզացիայի համար։ Մինչայդ պետք էր խուսափել վճռական գործողություններից, շատանալ միայն կազմակերպչական աշխատանքով։

Մայիսյան տոներ հեղափոխական ուժերի զորատես պիտի լիներ։ Բայց զորատեսը պետք է հեղափոխական ցույցի վերածվեր, և կոմմունիստներն ամենուրեք նախապատրաստություն էյին տեսնում ղեկավարելու այդ ցույցը։ Հիրավի, մայիսի մեկը հեղափոխական մեծ ու դարձավ ամբողջ Հայաստանում, թեև քաղաքական միջանկյալ հանգամանքներն այդ որը չափազանց անպատեհ էյին դասավորում Հայաստանի կոմմունիստական կազմակերպություն համար։ Այդ որն էր, վոր Հայաստանի կառավարությունը ստացավ Ադրբեջանի վերջնագիրը, վորտեղ պահանջ էր դրվում անհապաղ մաքրել Ղարաբաղն ու Զանգեզուրը հայ զորամասերից, քաշվել դեպի Հայաստանի սահմանները, վերջ տալ ջարդերի քաղաքականություն։ Հակառակ դեպքում վերջնագիրը սպառնում էր պատերազմական համարել յերկու պետությունների հարաբերությունները։ Վերջնագրին առանձին ուժ է կարևորություն էր հաղորդում Խորհրդային Ռուսաստանի անունից Որջոնիկիսէյի և Լևանդովսկու ստորագրությունամբ Հայաստանի կառավարության ուղղված համազոր հայտագիրը։ Բոլոր այս գրությունները բղխում էյին գուցե Ադրբեջանում տեղի ունեցած հեղաշրջման անմիջական շահերից, սակայն կասկածից դուրս է, վոր դրանք անպատեհ հանգամանքներ էյին Հայաստանում դարգացող հեղափոխական շարժման համար։ Իզուր չէ, վոր, անտեղյակ դրսի իրադարձերին, Հայաստանի կոմմունիստները պահ մի հակահեղափոխական հերյուրանք համարեցին վերջնագրի մասին կառավարության արած հայտարարությունները։ Ազգային կրքերը բորբոքվելու հաշվով արվող այդ հայտարարությունները հեղափոխության դեմ ուղղված պայքարի նշանաբաններ էյին տալիս Հայաստանի քաղքենիներին։ Յեվ արդեն իսկ մայիսի մեկին դաշնակցականները փորձ էյին անում չափավորել մասսաների հեղափոխական տրամադրությունը։ Նրանք մեղադրում էյին Ադրբեջանի հեղկոմը ազդեցիվ նացիոնալիզմի մեջ և վեր հանում Հայաստանին սպառնացող պատերազմի վտանգը։ Ադրբեջանի սովետիզացիան իսկ համարվում էր մուսավաթական քաղաքականության հերթական տրյուկներից մեկը։

Բայց և այնպես՝ փորձերը տակավին չտվեցին սպասած հետևանքները։ Ֆերկանում, Ալեքսանդրապոլում, Ղարաբիլիսում, Դիլիջանում, Ղարսում,

դակութիւնն ունեցին: «Կեցցե խորհրդային Հայաստանը», «Բագուն ընկալ հերթը Յերեանինն ե»: Այս խոսքերն ելին գրված այն դրոշակների վրա, վոր պիտի առաջնորդեյին Ալեքսանդրապոլի կոմմունիստներին դեպի փողոց: Նախատեսնելով հնարավոր բարդութիւնները, կուսակցութեան Ալեքսանդրապոլի կոմիտեն վորոշում ընդունեց ցույցի ժամանակ խուսափել ճիւղերից, անգամ յեթե կառավարութեան ագենտները զենքի ոգնութեան դիմեն: Վորոշվել եր միայն ծայրահեղ դեպքում, յեթե չհաջողվի խաղաղ ընամուտութիւն տալ ցույցին, ընդունել դաշնակցականների մարտահրավերը, գրավել իշխանութիւնը: Դժվար ե ասել, թե ինչպես եր պատկերում իրան Ալեքսանդրապոլի կոմիտեն վերջին հնարավորութիւնը մայիսի մեկի նախորեյին: Սակայն ինքնին տարրինակ այդ վորոշումը անխուսափելի անհրաժեշտութիւն դարձավ արդեն հաջորդ օրը, տոնական յերթից անմիջապես հետո, յերբ խաղաղ ցույցը տարեբային շարժման ընամուտութիւնն ստացավ:

Մայիսյան յերթը սկսվելու յեր առավոտը, կայարանի հրապարակից: Նշանակված ժամին իրանց դրոշակներով հալածվեցին այստեղ կոմմունիստական խմբակները: Անհրաժեշտ եր չափել կուսակցութեան ազդեցութիւնը, ուստի ե վորոշված եր չխառնվել ընդհանուր թափօրին: Յեւ անա Լենինի նկարով զարդարված կոմմունիստական մեծ դրոշակի յետեից շարժվող յերթին ե, վոր սկսում ե միանալ բանվորական կազմակերպութիւնների ու անկազմակերպ քաղաքացիների հազարավոր բազմութիւնը: Դաշնակցական շարքերը, վոր կցվում եյին ժողովրդական այդ մեծ թափօրի պոչին, կազմված եյին արհեստակցական միութիւնների միջանի տառնակ անդամներից, խանութպաններից ե սոցիալական կասկածելի ծագում ունեցող այլ քաղաքացիներից: Յեռագունի յետեից շարժվող այդ ցանցաւ շարքերը փոքր ինչ խտացրին ամերիկյան վորքերը... Միացյալ Նահանգների դրոշակներով:

Շքերթը կանգ ե առնում Դումայի հրապարակում: Միտինգը բաց ե անում կոմմունիստ ընկերներից մեկը: Վոդչունի խոսքեր յեղան Բագվի պրոլետարիատի ե ուսանական Կարմիր բանակի հասցեյին: Յուցարարների բացականչութիւնները լսեցնում եյին դաշնակցական հետադուրներին, վորոնք մատնանում եյին Ադրբեյջանի հեղկոմի ազգային կազմը, Ղարաբաղի մասին Հայաստանի կառավարութեան ուղղված ուղտիմատումը, պատերազմի հնարավորութիւնը ե այլն: Հաջորդում են կոմմունիստ հետադուրները, վորոնք հերքում են դաշնակցականների հայտարարութիւնները, վորակում այդ վորակես կառավարական պրոլետարիատ: Համակրական կոչերը խլացնում են հետադուրների ձայնը: Կորչի Դաշնակցութիւնը, կեցցե կոմմունիստական կուսակցութիւնը, կորչի ջարդարար կառավարութիւնը, կեցցե խորհրդային իշխանութիւնը... Ամբոխի միջից բանվորի շորերով, յերեսը մրոտ հայտնվում ե տեղական կոմմունիստների դեկավար ընկ. Ավիսը, վոր մինչայդ խուսափել եր կառավարական ագենտների տեսողութիւնից: Իր ճառով նա արծարծում ե այդ իսկ կոչերի իմաստը, նշավակում տիրող կարգերը ե մատնանում Հայաստանում խորհրդային իշխանութիւնն հաստատելու անհրաժեշտութիւնը: Բուռն ծափերով ընդունվում ե կոմմունիստների առաջարկած ուղղութիւնը, վոր բանտարկվածներին ազատելու պահանջ ե դնում ե բանվորական խորհրդների կազմակերպելու կոչ անում:

Դումայի հրապարակում միտինգը վերջանում եր, յերբ յեկան հեծելազորի կողմից ուղարկված պատվիրակներ ու խնդրեցին առաջ շարժվել դեպի զորանոցները: Զինվորական պետերը թույլ չեյին տվել, վոր զինվորները դուրս գան ու միանան հրապարակի միտինգին: Տեղեկանալով զինվորների

խնդրի մասին՝ ցուցարարները ցանկութիւնն են հայտնում կատարել այն ե «Խնտեղնացիներնալի» հիմնով շարժվում են զորանոցների ուղղութեամբ: Հաղթանակելով ներքին տատանումները՝ սպայական կազմը գարնիզոնի պետ գեներալ Սաչատրյանի գլխավորութեամբ վորոշում ե զինվորների գլուխ անցնել ե շարքեր կազմելով «պատշաճ» ընամուտութիւն տալ զորքի ե ցուցարարների հանդիպման: Յենթադրվում եր, վոր միայն այն միջոցով կարող ե հնարավոր դառնալ «որինականութիւնն» ու խուսափել «անախորժ բարդութիւններից»: Մասնավոր դիմումով գեն. Սաչատրյանը խնդրում ե միտինգի դեկավարներին հակահաղթարական արտահայտութիւններ չանել, անհրաժեշտ կացութեան մեջ չը դնել իրան: Բայց զորանոցի մոտ վերակալած միտինգը ապարդիւն ե դարձնում բոլոր նախազգուշացումները: Վոդչունի խոսք ուղղելով զինվորներին, կոմմունիստ հետադուրներից մեկը դրվատում ե զորքի հեղափոխական դերը, կոչ ե անում ձեռք մեկնել Կարմիր բանակին ու պատվար դառնալ խորհրդային իշխանութեան: Ժառանգորդ հարձակվում ե դաշնակցական կառավարութեան վրա, հիշում ե բանտարկված ընկերներին, վորոնք այդ օրը քաղց եյին հայտարարել, պահանջում ե բանալ նրանց առաջ բերելի դռները... Հակահաղթարական այդ ճառը մի վայրկյան շփոթութիւնն ե առաջացնում սպաների ե զինվորներից շատերի մեջ: Այնուամենայնիվ գեն. Սաչատրյանը, խոսք առնելով, շնորհակալութիւնն ե հայտնում զորքին ցույց տված ուղղութեան համար ե հայտնում, վոր Հայաստանի զինվորութիւնը բարեկամ ե «ազատութեան» ե պատրաստ... պաշտպանելու հայրենիքը բոլոր թշնամիներից: Փորձում ե խոսել դաշնակցականներին մեկը: Յուցարարները խանդարում են: Միտինգի դեկավարն աշխատում ե հանգստացնել ցուցարարներին, թույլ տալ բոլորին արտահայտվել: Ապարդիւն: Առաջարկ ե լինում վոդչունի հեռագիր ուղարկել Ադրբեյջանի հեղկոմին: Հեռագիրը պատրաստակամութիւնն եր հայտնում միացած ուժերով տապալել «հայ մուսավաթիստներին» ու «թուրք դաշնակցականներին» իշխանութիւնը, վերջ տալ ազգայնական ջարդերին ե խորհրդային Ռուսաստանի ու արեւելքի ճնշված ժողովրդների հետ ընդհանուր պայքար տանել միջազգային իմպերիալիզմի դեմ: Ծափահարութեամբ ընդունվում ե առաջարկված հեռագրի բնագիրը: Խրախուսված այդ բոլորից, զինվորներից միջանիսը, խոսք ստանալով, սուր լեզու բանեցրին տիրող կարգերի, մանավանդ զինվորական ուժի մի հասցեյին: «Կարգի» խախտումն ակներև եր: Փափուկ դրութիւնից յեկնելու համար զրախապատի պետ Մուսայելյանը, ինքզինքը կոմմունիստ հանձնարարելով, «կարգապահութեան» կոչ արեց զինվորներին: Բայց հենց այն փաստը, վոր միտինգին վորակես կոմմունիստ խոսք կարող եր առնել զրահապատ գնացքի պետը, գալիս եր շրջելու «կարգապահութեան» մասին տիրող հասկացողութիւնը ե ուժ տալու զինվորների մեջ հեղափոխական խմբումին: Փաստ ե, վոր զինվորական շարքերի մեջ արդեն իսկ այդ ուրն եր առաջանում հոգեբանական բեկումն, վոր պետք ե խախտել հին հասկացողութիւնները ե մատչելի դարձնել այդ մասաներին նոր ազդեցութիւններ համար: «Յեթե այդ օրը,—գրում ե մայիսի մեկի մասին, յերեք օր անց, Ալեքսանդրապոլի կուսկոմը,—չգրավեցինք իշխանութիւնը, պատճառը մեր թուութիւնը չեր, այլ այն, վոր զինվորական մասաները դեռ բավականաչափ կազմակերպված չեյին. բացի այդ՝ կար նաեւ թալանի վտանգը»:

Հեռանալով զորանոցներից, ցուցարարները, վորոնք միացել եր գեներալի հրամանին չհաղանդված զինվորների մի մասը, փորձ են անում դիմել դեպի բերդ, բանտարկյալներին: Բնամարտ Բայց կանխելով այդ

դեպքում անխուսափելի ընդհարումը, ցույցի ղեկավարները կարողանում են մի կերպ դեպի քաղաքային հրապարակ ուղղել շարժումը: Հրապարակի վրա նորից միտինգ է բացվում: Ընկ. Ավիսը բարձրանում է կառքը և սկսում է ձառել նորից: Ճառը հուզում է դաշնակցականներին: «Ազրբեջանը պատե-
րանք է հայտարարել» — բացականչում է նրանցից մեկը: «Դավաճաններ», «խուլիգաններ» — ձայնակցում են մյուսները: Ցուցարար բանվորներից մի-
քանիսը բարձրացնում են իրանց բուռն ցնցերը և հարձակվում դրանց վրա: Սրանք փախչում են Դաշնակցության ակումբը: Այստեղից սկսում են կրա-
կել: Դրսից պատասխանում են: Մեկը վիրավորվում է: Չայրացած ցուցա-
րարները խուժում են ակումբի սրահը, պատռոտում և վոտի տակ տալիս
կուսակցության հիմնադիրներին պատկերները: Կրքերը փոքր ինչ հանգստա-
նում են, յերբ վրա յեն հասնում ցույցի կազմակերպողները: Ակումբից
դուրս գալով, միքանիսները նորից բղավում են. «Գնանք բերդ»: Զինվորները
շտապում ելին դորանոցները զենք վերցնելու: Սրանց բոլորին դարձյալ
հանգստացնում են: Հաջորդում է նորից կարգավորել ցուցարարներին հոսան-
քը և ուղղել այն դեպի կայարան: Այստեղ նորից կրակոտ ճոճեր են արտա-
սանում ցույցին մասնակցող բանվորներից և զինվորներից վոմանք, նորից
դաշնակներին տապալելու կոչ անում: Կեսուրից հետո ժամի չորսն եր, յերբ
հետզհետե նոսրանալով, ցուցարարները ցրվեցին տուն:

V

Մանր են դեպքերը, բայց ուշադրավ: Շարժումը դուրս եր գալիս կազ-
մակերպական հունից և դառնում տարերային: Դեկավարները ճիգ են անում
տիրանալ շարժման տարերքին: Այդ հաջողվեց ցույցի որը: Բայց ցույցը
ապստամբություն էր փոխանցվում: Յեվ այստեղ եր, վոր պիտի փորձանքի
յենթարկվեյին ղեկավարները և նրանց հետ՝ բռնկած ապստամբությունը:

Մայիսի մեկին, ուշ գիշերը, Ալեքսանդրապոլում կառավարական ազնիտ-
ները հրահանգ ստացան ձերբակալելու ցույցի կազմակերպողներին միքա-
նիսին: Տեղեկանալով այդ մասին՝ ձերբակալություններից խուսափող կոմ-
մունիստ ղեկավարները թաղնիկցին դրահապատ գնացքի մեջ, Փորձ յեղավ
զինաթափ անել զրահապատը և չեղորացնել նրա պետ Մուսայելյանին: Վեր-
ջինս ընդդիմացավ փորձին և սպառնաց ուժակոծել քաղաքը: Կառավարա-
կան ազնիտները հեռացան, սակայն Մուսայելյանի ընդդիմությունը, բան-
վորների և զինվորների խրախուսանքից թևավորված, ճակատադրական դար-
ձավ հաջորդ որերի համար: Խոնավելով զրահապատի շուրջը, բանվորական և
զինվորական մասսաները պահանջում ելին կոխ սկսել դաշնակցականների
հետ, տապալել նրանց, հռչակել յերկրում խորհրդային իշխանություն: «Վար-
դան Զորավարը» հեղափոխական գործողությունների կայան դարձավ: Մու-
սայելյանը հրաման ստացավ մեկնել զրահապատ գնացքի հետ Ղամարու
«սահմանազուլը թուրքերի դեմ ամրացնելու համար»: Զրահապատը չի կա-
տարում այդ հրամանը, խուսափելով իր համար պատրաստվող ծուղակից:

Զորանոցի զինվորներից շատերը պոկում են իրանց ուսադիրներն ու
կոկարդները, հրաժարվում հպատակվել դաշնակցական իշխանության: Զը
կամենալով խրտնացնել սպայական կազմը, կոմմունիստները հովանավո-
րություն տակ են առնում զինվորական ուսապանակներն ու կոկարդները:
Սպայական կազմից շատերը քննություն են առնում ուժերի փոխհարաբե-

րությունը և վորոշում միանալ ապստամբներին: Մայիսի 2-ի և 3-ի ըն-
թացքում ստեղծվում են զորամասային կոմիտեներ, վոր սերտ կապ են
հաստատում զրահապատի հետ: «Յեռանդուն կերպով սկսեցի կազմակերպել
դրանց, — գրում է իր թղթերից մեկում Մուսայելյանը, — միքանի որվա
ընթացքում կարողացա կազմել միանգամայն դիսցիպլինայի յենթարկված
կարմիր բանակ»: Ալեքսանդրապոլի գաղնիգոնին հետևում է յերկաթուղային
և քաղաքային միլիցիայի մեծ մասը, վոր հետզհետե կոմմունիստների տրա-
մադրության տակ և անցնում: Բանվորները սկսում են զինվել: Կայարանը
և դրա հետ յերկրի հաղորդակցության գլխավոր հանգույցը փաստորեն յեն-
թարկվում է զրահապատի հրամանին: Իրերի բնական ընթացքը պատերազ-
մական դրություն է ստեղծում ապստամբների և կառավարության միջև:
Հակառակորդը միտք է հղանում պայթեցնել զրահապատը: Վտանգ կար, վոր
կայարանում վիստացող կառավարական ազնիտները կարող ելին տեղորիս-
տական ակտերի ևս դիմել: Հարկավոր ելին պաշտպանություն միջոցներ:
Զրահապատը զինվորական դրություն է հայտարարում կայարանում: Զրա-
հապատի շուրջը պահակ է դրվում: Դաշնակցականները փորձում են ողտա-
գործել յերկաթուղու արհեստակցական միություններում իրանց ունեցած
ազդեցությունը փշրանքները բանվորական մասսաներին զսպելու համար: Սա-
կայն դեռ մայիսի 2-ին, Ալեքսանդրապոլի կայարանի ակումբում արհեստակ-
ցական միությունների ընդհանուր ժողովում, Ազրբեջանի վերջնագրի առթիվ
դաշնակցականների սկսած պրովոկացիան արժանի պատասխան ստացավ
կոմմունիստներից: Դաշնակցականների ճիգերը պրովոկացիայի նորանոր
փորձերով խեղդել ապստամբական շարժումը ապարդյուն են անցնում:

Նման պարագաներում պետք է հասունանար բնականաբար նաև իշխա-
նությունը զրավելու խնդիրը. իրական ուժն ապստամբների կողմն եր
և, ինչպես հայտարարում է Ալեքսանդրապոլի կուսակցական կոմիտեյի
մայիսի 3-ի մի դրությունը, ստեղծված պայմաններում իշխանությունը
զրավելու խնդիրը, իրոք, կոմիտեյի կամեցողության խնդիրն եր. դա որվա
խնդիր չէր, այլ՝ բույնի:

Ամենից լավ հասկանում էր այդ Յերևանի կառավարությունը: Գար-
նանացանքի ժամանակ իր ունեցած ալյուրի պաշարը կառավարությունը
փոխանակեց սերմացուի հետ: Սակայն հայտնի չէ, թե վատնումների և զեղ-
ծումների ինչ հնարավորություններ ստեղծեց և՛ այդ փոխանակությունը, և՛
նրա միջոցով մթերած սերմացուի բաշխումը: Ալյուրի ձգնաժամը որ որին
ստատկացնում էր սովը, սրում մասսաների հակակառավարական տրամա-
դրությունը, տարերային բնավորություն տալիս արձարծիվող շարժման: Մա-
յիսի 3-ին կառավարական ազդն իջնում էր հացի առորյա պարենը $\frac{1}{4}$
ֆունտի: Մայրաքաղաքում, պարլամենտի առաջ միքանի հարյուր հոգուց
բաղկացած սովահար ամբոխը հուզումնալից ցույց արեց: Ղանթարի մոտ
գաղթական կանաչք հարձակվում են հացի և ուտեստի կրպակների վրա ու
թալանում: Գոռում գոչումով ամբոխը շարժվում է այնուհետև դեպի Առ-
տաֆյան փողոց, ջարդելով ճանապարհին հացի փուերն և ուտեստի խանութ-
ները: Յերկու ժամ տևում է այս «անկարգությունը»: Վերջում միայն խի-
զախում են դուրս հանել միլիցիան և հրացանի պարապ գալպերով ցրում
ամբոխը:

Այդ իսկ սրը տեղի ունեցավ պարլամենտի արտակարգ նիստ. կառա-
վարությունը ղեկուցում տվեց վերջնագրի մասին: Հայտարարվեց, վոր կար-
միր զորքերը զրավել են Յեկվախը և շարժվում են Ծուշի, Ղարաբաղի վրայով

Տաճկաստանին միանալու համար: Խոսվեց այն մասին, վոր Տաճկաստանը, «դարավոր վոսոխը», նպատակ ունի բնաջնջել Հայաստանը: Տարորինակ և սա-
կայն, վոր զինվորական նախարարի փոխարեն բանակի անունից «հայրենիքի
անկախությունը բոլոր վտանգներին դեմ պաշտպանելու» մասին խոսք և առ-
նում խմբապետ Սեպուհը, վորն այդ պահուն հրահանգ ևր ստացել Ռուսերն
Փաշայից զբաղվել բացառապես Ալեքսանդրապոլի ապստամբությունը ճնշելու
նախապատրաստությամբ: Պարլամենտը հանձնարարեց կառավարության-
«ձեռք առնել ամեն տեսակի միջոցներ հայ ժողովրդի ֆիզիկական գոյու-
թյունն ու նրա անկախությունը ապահովելու համար»: Հաջորդ որը դորա-
մասերի պետերը խորհրդակցության են հրավիրվում զինվորական մինիստրի
մոտ: Պարզվում է, վոր դորամասերի տրամադրությունն ամենուրեք «բոլ-
շեխկյան» է: Ապստամբների դեմ այդ ուժերը գործադրել չեն կարելի: Գա-
վառից ստացված տեղեկությունները վկայում են, վոր մասսաների մեջ աճող
հեղափոխական տրամադրություններն ու հացի շուրջն առաջացող նորանոր
«անկարգություններն» մասին: Անհրաժեշտ էլին արտակարգ միջոցներ ծա-
վարվող ապստամբությունը կանխելու համար:

Կառավարությունը վորոշում է ընդունում ցուցակադրել Հայաստանի
քաղաքներում յեղած հացի և ալյուրի բոլոր պահեստները: Վորոշվում է յե-
րեք ամսվա ընթացքում յուրաքանչյուր շնչին ամսական յերեսնական
ֆունտ հացի պաշար թողնել մասնավոր տներում: Մնացածը պիտի գրավ-
վեր, փոխարժեքը վճարելու պայմանով: Սոցիալիզմից փրկվելու համար
ազգային չարչիները դիմում են «սոցիալիստական» որևէ ուղի: Բնո-
րոշ է, վոր Յերեսնի և Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունները վո-
րոշում ընդունեցին՝ քաղցած չքավորությունը հանդատացնելու նպատակով
«հասարակական աշխատանքներ» կազմակերպել: Սակայն ապստամբության
դեմ կռիվը համար անհրաժեշտ ևր գործադրել նաև քաղաքական միջոցներ:
Դեպքերի անմիջական տալվորության տակ Խաթիսյանի կառավարությունը
խոսում էր յեռագուռնի և կարմիր դրոշակի միության մասին: Յենթադրվում
էր, վոր Ադրբեջանի սովետիզացիան վարակիչ պիտի լինի Վրաստանի հա-
մար, իսկ սա պիտի նախորոշեր Հայաստանի բախտը: Շատերը տրամադիր
էին կարծելու, վոր Ադրբեջանի վերջնագիրն իսկ Հայաստանի և Վրաստա-
նի սովետիզացիան արագացնելու մի միջոց և միայն: Առաջարկ յեղավ Ռու-
սաստանի միջնորդությամբ հարթել Ալեքսանդրապոլի «կոնֆլիկտը»: Սակայն
մայիսի 2-ին Թիֆլիսի զինվորական գլխավոր գրավելու համար կոմմունիստ-
ների ձեռնարկած փորձը վիժեց: Այս հանգամանքը ամբարցրեց ժողովրդային
կառավարության զիբքը Վրաստանում և գործողությունների վճռակառու-
թյուն ներշնչեց Հայաստանի դաշնակցականներին: Յեվ ահա այստեղ իսկ
նկատում ենք վերը հիշած տարրորինակ գուգադիպության մի նոր դեպք:
Մայիսի 4-ին պարլամենտը ցրվում է, կառավարական բոլոր ֆունկցիաներն
անցնում են Դաշնակցության Արևելյան Բյուրոյին՝ Հ. Ոհանջանյանի ղեխա-
վորությամբ: Վարիչ կուսակցությունը հայտարարում է միաժամանակ իր
անդամների մոբիլիզացիա: Նոր կառավարությունը հրատարակում է հե-
րյուրանքներով լի մի հաղորդագրություն, վորտեղ հիշեցնում է, վոր Ադրբե-
ջանի գործերը շարունակում են արյունահեղությունները Ղարաբաղում և
Գանձակում, վոր տաճիկները շարժումներ են անում Նախիջևանում և Շա-
րուրում, հրդեհելով հայ գյուղերը և վոր այդ ծանր վայրկյանին յերկրի ներ-
սում «զանազան անպատասխանատու խմբակներ վերջ չեն տալիս իրանց
զրգուր: Ընթացքին և կամենում են պառակտում առաջ բերել յերկրի մեջ,

առանց հաշիվի առնելու, վոր ամեն մի խլրտում առաջ կբերե անխիտանու-
թյուն ու պարենավորման սուր տաղնապ ու կզրկե ժողովուրդը ապրուստի
միջոցներից»: Հաղորդագրությունը հանգստության կոչ է անում և հայտա-
րարում կառավարության նշանաբանը. «Հայաստանի անկախության և ազա-
տության պաշտպանությունն ու ներքին դեմոկրատիկ կարգերի ամրապն-
դումը»: «Դեմոկրատիկ կարգերի ամրապնդման» համար անհրաժեշտ յեղավ
«արտակարգ հանձնաժողովներ» ուղարկել Ղարա (Աղբալյան, Արշ. Հովհաննի-
սյան, Վ. Խորենի) և Ալեքսանդրապոլ (Շահմաղյան, Կարո Սասունի և Բու-
դաղյան) ու «գեներալ կոմիսարներ» կարգել Հայաստանի չորս վարչական
կենտրոններում՝ Ղարա, Շիրակ, Յերևան և Ղարաբաղ (sicl): «Կոմմունիստ-
ական կուսակցության դեկտատուրայի» ու «արտակարգ հանձնաժողովների»
դեմ պայքարող քաղքենիները կարիքի բուպիյն սահմանում են հարադատ
կուսակցության դեկտատուրա և հեղափոխության դեմ պայքարող «արտա-
կարգ դատարանների» ինստիտուտը: Որենքի անունով որենքից դուրս են
հայտարարվում ապստամբ կոմմունիստները: Վտանգը, կարծես, «դրսից» էր:
Սակայն «հայրենիքի անկախությունը» պաշտպանող սուրը պետք է իջներ
փաստորեն միայն առաջին վոսոխի—Հայաստանի ապստամբ բանվորների և
զինվորների զլխին:

VI

Բախտորոշ որեր էլին: Մասսաների տրամադրությունն ապստամբների
կողմն էր: Սարիղամիշում, Ղարսում, Իդդիքում և Ղարաքիլիսայում, յերկա-
թուղու ամբողջ գծի վրա, բանվորները և զինվորները համակրական հայտա-
րարություններ էլին անում կոմմունիստների հասցեյին: Մայիսի 5-ին Թե
6-ին, Մուսայելյանի հրամանով, «Վարդան Զորավարի» Ղամարվում գտնվող
զրահավորված սլաաֆորմն իր շոգեկառքով, առանց իշխանավորներին նա-
խադուշացնելու, ուղևորվեց Ալեքսանդրապոլ ու միացավ զրահապատին:
Պլատֆորման առաջնորդող Գասպար Յեվանգուլյանը, արտիլերիայի պետը,
պատմում է, վոր Ղամարվից Ալեքսանդրապոլ տանող ամբողջ գծի վրա
յերկաթուղու բանվորներն ու ծառայողները խանդավառությամբ վողջնում
էին Ալեքսանդրապոլ սլացող շոգեկառքը: Խնորոշ է, վոր սլաքարի այս
որերին կառավարությունը չողտադործեց իր տրամադրության տակ գտնվող
«Ազատամարտ» զրահապատը: Յերկուղ կար, վոր կռվի ժամանակ վերջինս
կարող է նույնպես «Վարդան Զորավարի» կողմն անցնել: Նոր կազմակերպ-
ված դաշնակցական կառավարությունը չունեի տակավին վստահելի ու կազ-
մակերպված ուժեր ապստամբության առաջն աննկու համար: Պետք էր ող-
տադործել վայրկյանը, քանի դեռ անող և շիվար կացության մեջ էր կառավա-
րությունը: Պահանջվում էին սլարդ ու վորոշ հրահանգներ, արագ ու շեշ-
տակի գործողություններ, քանի դեռ ցրված էին ու անկազմակերպ հալա-
հեղափոխության ուժերը:

Առարկայորեն իշխանությունը գրավելու խնդիրն էր դրված, գոնե
ապստամբների ազդեցության շրջանում: Հարկավոր էր առաջիմ կոմմունիստ-
ական կուսակցության Հայաստանի կոմիտեյի—Արմենկոմի սանկցիան:
Սակայն կոմիտեն իշխանություն գրավելու անհրաժեշտություն չէր տեսնում
և նրան ուղղած բոլոր ղեմումներին ստացվում էր բացասական պատասխան:
Կացության ճիշտ ըմբռնումն էր, վոր չկար ձևկատադրական այդ որե-
րին կուսակցության Հայաստանի կենտրոնում: Ալեքսանդրապոլից ստացվող

ինքորմացիան թերահավատությամբ եր ընդունվում, վերագրվում զեկա-
վարներին «չափազանցություններին»: Արմենիումը ժխտում եր ապստամբու-
թյան փաստը: Այն նշանակում եր ալեքսանդրապոլսիցիների «խանդավառու-
թյունը», պախարակում ապստամբության զեկավարների «բախտախնդիր»
քայլերը, առաջարկում «զգաստ ու խելացի» միջոցներ: Չկա ապստամբու-
թյուն, և ժամանակ ել չե դրան: Կա միայն պարարտ հող հեղափոխական
աշխատանքի համար: Հաջողության գրավականը կուսակցության հեռատե-
սությունն է, նրա շրջանկատ ընթացքը: Պետք է տուլալ և պատրաստվել:
Մարդիկ չկան, պարեն չկա: Վճռական գործողությունների ազդանշան կարող
է լինել դրսի ոգնությունը: Մինչ այդ չպետք է լքել ստաստղական վիճակը,
անգամ յեթե պահանջվի ծանր զոհաբերություն:

Չափավորության այդ հորդորը բղխում եր Յերեանի համեմատաբար
անխռով կացությունից: Մինչդեռ զեպքերի հորձանքը տարերային ուժ եր
հաղորդել յերկրում արծարծվող ապստամբության, զինելով իր գեմ ներհակ
ուժերի մի բանակ: Ապստամբությունը փաստ եր, ընդհարումն անխուսա-
փելի: Իշխանությունը գրավելու պահանջը ջերմոցային դատողությունների
արգասիք չէր, այլ ապստամբության փաստից բղխող մի խնդիր: Թերևս
ուժերի ուժեղ հարաբերությունը ընդհանուր մասշտաբով նպաստավոր չէր
տարերային ուժով բռնկած ապստամբության համար: Թերևս չէր հասել
նույնիսկ հաղթական պայքարի «ժամանակը»: Սակայն պայքարն սկսված
էր արդեն և նահանջի տեղ չկար: Կուսակցությունը պարտավոր եր զեկա-
վարել ապստամբությունը, մտցնել այն դիտակցական ու կազմակերպական
շրջանակի մեջ: Հրաժարվել իշխանությունից, կնշանակեր հրաժարվել ապս-
տամբությունը զեկավարելու պարտականությունից: Իսկ սա հավասարազոր
կլիներ քաղաքական ինքնասպանության: Չէր կարելի գլխատել այն իսկ
մասսաները, վորոնց վրա հենվում եր կուսակցությունը: Ստեղծվել էյին
պայմաններ, յերբ պետք եր նախահարձակ լինել, անգամ յեթե անխուսա-
փելի դառնար պարտությունը: «Համառ կռվից հետո կրած պարտությունը
հեղափոխության համար նույն նշանակությունն ունի, ինչ դյուրությամբ
նվաճած հաղթանակը» (Ենգելս): Ապստամբությունը պիտի կանխեր
հակառակորդի հակահեղափոխական գործողությունները, ապահովելով իր
իսկ հաղթանակի թիկունքը: Հակահեղափոխական ագիտացիան, զրգուկով
մեղշանության շովեն բնազդները, ծավալվում եր: Դրան ավելանում էյին
կառավարական հայտարարությունները յերկրի պարենավորման հեռանկար-
ների մասին: Թերթերը պաշտոնական և կիսապաշտոն հաղորդագրություն-
ներ են գետեղում այն մասին, վոր Հայաստանի համար Ամերիկայից ուղարկ-
ված ալյուրը, ամերիկացիների արած նախազգուշացումներն համաձայն,
կստացվի, յեթե չլինեն «բողիկեկյան խռովությունները»: «Պռովություն-
ների» շնորհիվ է, հայտարարում էյին դաշնակցականները, վոր ամերիկացի-
ներն ու վրացիները հրաժարվում են Հայաստան ուղարկել Բաթում հասած
հարյուր հազարավոր փութ ալյուր, 60 վագոն մթերք, Հայաստանի գաղ-
թականության համար գնված լծկաններ, յերկրագործական գործիքներ և
այլն: Տեղեկացնում էյին, վոր ամերիկացիներն արդեն սկսել են կրճատել
փորանոցները, փողոց նետել վորքերին: Լուրերը նպատակ ունեյին լքում
առաջացնել մասսաների մեջ, բայց և այնպես դրանք միանգամայն անհիմն
չէին: Նկատելով կոմունիստների հաջողությունները, ամերիկացիները
սկսում են գատարկել Ալեքսանդրապոլում գտնված իրանց պահեստները:
Հայաստանի վորքերի անունով ստացված մթերքները անցնում էյին դաշ-

նակցականների ձեռքը, կամ՝ վաճառվում սպեկուլյանտներին: Կուսակցու-
թյան Ալեքսանդրապոլի կոմիտեն այդ առթիվ թուղթ է գրում տեղի ամե-
րիկյան հիմնարկների կառավարչին: Ապահովելով ամերիկացիների
կյանքն ու գույքը, կոմիտեն առաջարկում է շարունակել Հայաստանի ող-
նության գործը: Հակառակ զեպքում սպառնում է... գրավել և Հայաստանի
աշխատավորության սեփականություն հայտարարել ամերիկյան պահեստ-
ները:

Մինչայդ պարենային ճգնաժամը գնալով սրվում եր: Ապստամբ ուժերի
համար ստեղծված եր ծանր կացություն: Սովի ճնշման տակ յերկաթուղու-
բանվորները սպառնում էյին գործադուլի դիմել: Սպառնալիքն ապստամ-
բության սխալտոմեքից մեկն եր: Բայց միաժամանակ այն մահացու վտանգ
էր ապստամբության, վորի համար պահանջվում եր ռազմական գործողու-
թյուններ սկսել զծի վրա, հետևաբար և՛ բանուկ պահել հաղորդակցությունը:
Այդ տեսակետից գործադուլը շահավետ եր միայն կառավարության, վոր
ձգտում եր ժամանակ կորզել ապստամբների դեմ կամավոր խմբեր կազմե-
լու համար: Ահա թե ինչու կոմունիստներն ըստ ամենայնի աշխատում
էյին կասեցնել գործադուլի միտքը: Նրանք առաջարկում էյին բավականա-
նալ կառավարությանը գրավոր պահանջներ անելով: Ուժերի կազմակերպու-
թյան համար ժամանակ կորզելու նպատակով եր հենց, վոր կառավարու-
թյան ներկայացուցիչները բանակցություններ սկսեցին զրահապատի հետ: Հը-
րահանգներ չունենալով կենտրոնից, կոմունիստները չհրաժարվեցին բանակ-
ցություններից: Զրահապատի կողմից պահանջ յեղավ ցրվել յերկաթուղային
ծառայողների պրոֆմիության կենտրոնական կոմիտեն ու յերկաթուղագծի
արտակարգ հանձնաժողովը, պրոֆեսսիոնալ խնդիրներում լիազոր ճանաչել
միայն զեպոյի միությունը, թույլ տալ նրան բանվորական կոնֆերանս
գումարել հուղող տնտեսական և քաղաքական հարցերը քննելու համար, ա-
զատել մինչայդ բանտարկված բանվորներին և այլն: Բանակցությունների
ընթացքում առաջ քաշվեց նաև ամերիկյան մթերքների խնդիրը: Զրահա-
պատն առաջարկում եր կանգնեցնել Յերեանից Թիֆլիս մեկնող ամերիկա-
կան վագոնները, պահանջել վոր անհապաղ Հայաստան ուղարկեն նրան
հասցեյագրված ապրանքները: Հակառակ զեպքում կոմունիստները սպառ-
նում էյին միջամտել և պահանջը կուսակցության անունից առաջադրել: Գը-
նացքը ժամանելու պահին կառավարության պատասխանը դեռ չէր ստացվել:
Կոմունիստները շրջապատեցին ամերիկացիներին և հարկադրեցին ստորա-
գրություն տալ, վոր Հայաստանի ոգնության գործը կշարունակվի՝ առկա
յերկրի կառավարության սխտեմից: Թուղթն ուներ հարկավ միայն ագի-
տացիոն նշանակություն: Այն, պնդում է անկուսակցական զինվորականի
ժամանակակից մի վկայությունը, ժողովրդի մեջ համակիր տրամադրություն
առաջացրեց զեպի այս շարժումը: Կոմունիստները, այնպես էյին տրամա-
բանում շատերը, ժողովրդի մասին ավելի յեն մտածում:

Ինքնին, հարկավ, վավերագիրը կասկածելի արժեք ունեցող մի թուղթ
էր և իզուր չէ, վոր, ինչպես ամերիկացիներից ստորագրություն ստանալուց
մի որ առաջ, նույնպես և դրանից մի որ անց խմբագրած հեռագրերով
ապստամբներն իշխանությունը գրավելու համար ոգնություն էյին խնդրում
Ադրբեջանի հեղկովից... Արմենիումն ընթացք չտվեց այդ հեռագրին: Սակայն
անկախ դրանից անհրաժեշտ էյին արտակարգ միջոցներ տեղում իսկ՝ պա-
րենային խնդիրը հարթելու համար: Սերմի և պարենի գլխավոր պահեստ-
ները գտնվում էյին Յերեանում և Սուրմալում: Կտրվելով այդ շրջանի-

բից՝ Շիրակի, Ղարսի և Սարիղամիշի գարնանացանքը և բանվորների ու գինավորների պարենավորման գործը վտանգի էլին մատնում: Մինչդեռ Ալեքսանդրապոլում գտնված սերմանման և պարենային վերջին պահեստներն իսկ որ ցերեկով դաշնակցականներն ու պաշտոնյաները թալանում էին՝ կանխելով ամեն մի «անակնկալ»: Յեվ հենց այս եր պատճառը, վոր ապրտամբուլյան ղեկավարներն աշխատում էին դրուժյան տեղ դառնալ—խլել իշխանութունը և այդ միջոցով ամրացնել գրաված հեղափոխական դիրքերը: Մեր պաշարը—գրում և մայիսի 5-ին Արմենկոմին ուղղած մի գրության մեջ ընկ. Ավիսը, որը որին պակասում և և թալանվում: Ձեր վարանդաների շնորհիվ շարժումը տարերային կերպարանք կընդունի, և պատմության կամքով մենք գլուխ կկանգնենք քաղցած և ամեն բանի ընդունակ մի քնակչության: Այն ժամանակ արդեն ուշ կլինի: Մեր թշնամիները մաուզերիստները չեն, այլ՝ սովը: «Հայտնում եմ,—գրում և նույն որը նույն ընկերը մի այլ նամակով,—վոր ձգձգումների և դրա հետևանքների համար ամբողջ պատասխանատվությունը դուք պիտի կրեք: Ձեր վորոշումը, սկսել Ղաղախում և հետո այստեղ և նախ կապ հաստատել ու ապա սկսել, հիմնովին սխալ եմ համարում: Պետք է նախ գրավել և ապա շարժվել: Յեվ պետք է սկսել հենց Ալեքսանդրապոլում, վորտեղից կշարժվենք հետո Ղաղախ: Յեթե մեր բոլոր ուժը հակառակորդին հանձնենք, բոլորս կենթարկվենք անաբեկության: Խնդրում եմ մեր կուսակցության, բանվորների և զբոսապատի առևտրից՝ հնարավորություն տվեք մեզ, կամ յեկեք այստեղ և տեղում ծանոթացեք կացությանը: Գրում եմ և չգիտեմ, թե ինչ և լինելու միջանի ժամից: Հասկացեք վերջապես: Սպասում ենք»:

Ալեքսանդրապոլի ընկերները գտնվում էին ապստամբության ծավալվող ողակի մեջ: Նրանք տեղում էին սկսված շարժումը և գիտակցում այն հետևանքները, վոր պիտի առաջանային, յեթե շարժումը չխորանար, յեթե ապստամբները չգրավեին իշխանութունը: Ալեքսանդրապոլի կոմիտեն շարժման գլուխ եր անցել և հասկանում եր, վոր նահանջի ճանապարհ չկար այլևս: Ակտիվ գործողությունների դիմելու համար կոմիտեն հաշվի չեր առնում ստեղծված դրությունը և ամենից առաջ նրա հոգեբանական կողմը՝ մասսաների տրամադրությունը: Պարզ պատկերացում ապստամբության որչեպիվ ընթացքի և հնարավորությունների մասին չկար ղեկավարների շարքերում: Շարժման արտաքին պայմանների անախդը նրանց չեր գրադեցնում: Սակայն ուշագրություն չեր առնում նաև ապստամբության համար կարևոր սուբյեկտիվ մի մոմենտը—ղեկավարող կուսակցական կազմակերպության վիճակը: Գիտակցվում եր, վոր կուսակցությունը գլխավոր կահանքիվի, յեթե չգլխավորի և չղեկավարի ապստամբությունը: Սակայն ունե՞ր այն ուժ և կարողություն մնալ ապստամբության ընթացքում ղեկավարող բարձրության վրա: Այդ հարցն եր, վոր չեր դրված: Մինչդեռ խնդրի այս կողմը կարող եր նույնքան ճակատագրական դառնալ ապստամբության յեղի համար, վորքան ճակատագրական եր կուսակցության Հայաստանի կետրոնի վարանդ ապստամբության սկզբնավորման շրջանում:

VII

Ալեքսանդրապոլի գիտնականներն անհետևանք չմնացին: Հաշտվելով կատարված փաստի հետ, Արմենկոմը վորոշում և միջամտել ապստամբությանը, ընդհանուր ընավորություն տալ նրան: Վորոշվում և համազոր շարժումներ

առաջացնել հանրապետության մյուս վայրերում, բացառությամբ չանելով նաև Յերևանի համար: Մայիսի 6-ին Ալեքսանդրապոլ եր ուղարկվում Արմենկոմի յերկու ներկայացուցիչները՝ Արտաշես Մեղրոնյան և Դրամատամատ Տեր-Սիմոնյան. լիազորություն եր տված սրանց ապստամբության ընթացքը կասեցնել չկարենալու դեպքում՝ կապ հաստատել Ղարաքիլիսայի, Լոռու և սահմանամերձ շրջանների հետ՝ ընդհանուր ապստամբության առաջացնելու նպատակով: Միաժամանակ միջոցներ եր ձեռք առնվում վորոշել Յերևանում, Քանաքեռում և Նոր-Բայազետում գտնված զորամասերի տրամադրությունը:

Արմենկոմի ներկայացուցիչները Ալեքսանդրապոլ ժամանեցին մայիսի 7-ին: Խորհրդակցությունները չեն ձգձգվում: Փոխադարձ ինֆորմացիայից հետո նույն որը յերեկոյան Ալեքսանդրապոլի կոմիտեն Յերևանից, Ղարաքիլիսայից և Դիլիջանից յեկած ընկերների մասնակցությամբ տեղի ունեցած նիստում վորոշում և ընդունում գրավել իշխանութունը: Արմենկոմի ներկայացուցիչները Յերևանում մշակված տեսակետի վրա էլին պնդում, սակայն խոնարհվելով փաստական դրությունը առաջ, խնդրի քվեարկությունից հետո՝ veto-յի հարց չեն հարուցանում: Վորոշվում և հրահանգ ուղարկել Ղարախի Սարիղամիշի, Լոռու և Ղաղախի կազմակերպություններին իշխանութունը գրավելու պատրաստություն տեսնել՝ սպասելով հատուկ հրահանգի ապրտամբության որվա մասին: Խնդիր և ուղարկվում Արմենկոմին ագիտացիոն աշխատանք տանել Ալեքսանդրապոլի դեմ ուղարկվելիք զորաշարքերում և առաջին հերթին շարժում առաջացնել Նոր-Բայազետում, Յերևանովայի կողմից Յերևանի վրա ընդհանուր հարձակում սկսելու համար: Դիլիջանից յեկած ընկերը հատուկ մանդատով ուղարկվում և Աղբբեջան «կենդանի ոգնություն» ստանալու համար: Կոմիտեյի նույն նիստում կազմվում և Խորհրդային Հայաստանի Ռազմա-հեղափոխական Կոմիտե: Տեղի ունեցան մի շարք նշանակումներ: Մուսայելյանը կարգվեց հանրապետության ռազմական գործերի կոմիսար և ընդհանուր զորահրամանատար, Ավիսը ստանձնեց արտաքին գործերի կոմիսարությունը, Մեղրոնյանը՝ ներքին և այլն: Հեղկոմը նախագահ չունեի, և դրա կարիքն եր չգցացվեց լուսերևութին: Վորոշ և, վոր այդ նիստին նիշվեց նաև Ղարախի և Իջևանի հեղկոմների կազմը: Ալեքսանդրապոլի իրում և Արմենկոմի ձեռքից ապստամբությունը ղեկավարելու ինիցիատիվը:

Հաջորդ որը Ալեքսանդրապոլում տների պատերին փակցված եր հեղափոխական կառավարության անդամների ցուցակը: Սակայն տարորինակ կերպով իշխանութունը տակավին շարունակում եր մնալ դաշնակցականների ձեռքում: Նոր կառավարության անդամներն ու կուսակցական աշխատակիցները դուրս չեկան զբաղապատից, վոր շարունակեց ախուհետև ևս լինել ընդունարան, զբոսանյակ, ժողովատեղի ու ննջարան նրանց համար: Թվում եր, վոր Հեղկոմ կազմելու փաստը բավական եր ինքնին, վորպեսզի, խոնարհվելով մասսաների տրամադրության առաջ կամ հաշվի առնելով ուսաների հնարավոր միջամտությունը, Յերևանի կառավարությունը հրաժարվի իշխանությունից: Իդուր չե, վոր որեր շարունակ Մուսայելյանն ու Մեղրոնյանը ուղիղ գծով շարունակում էին բանակցություններ վարել Յերևանի հետ, առաջարկելով առանց գլխավորության, առանց արյունահեղության որինական ճանաչել հեղաշրջումը: Գին. Նաղարբեկովը նույն հեռագրաթելով հայրական հորդոր եր կարդում հետալ կապիտանին՝ յենթարկվել Յերևանին: Կապիտանը հանրապետության ռազմական կոմիսարին ու ընդհանուր զորահրամանատարին վայել չեշտով պատասխանում և, վոր ինքը Հեղկոմին և յենթարկվում:

Մի ուրիշ հեռագրաթիւ հրամայում և զրահապատի կոմենդանտ նշանակված Յեվանդուլյանին վերադառնալ ու բացատրել Ղամարու-Յուլա գիծը ինքնադուլի լքելու պատճառը: Յեվանդուլյանն ուղարկում և լակոնական պատասխան. «Ալեքսանդրապոլում կարգ հաստատվելուն պես՝ կգամ Յերեսին»: Յեվ աշպես անվերջ:

Դաշնակցականներն, իհարկե, չէին հորանջում: Մայիսի 8-ին քաղաքում նրանք կազմակերպեցին միտինգ, կոմունիստների ազդափնտս քայլերի դեմ բողոքելու համար: Փողոցներում վիտացող գաղթականներից, մաուզերիստներից, սպեկուլյանտներից և այլ կարգի քաղքենիներից բաղկացած ամբոխի առաջ միտինգի կազմակերպողները բողոքի ճառեր արտասանեցին «կարմրաներկ Աղբընջանի և Նրա «հայ վարձյալների» հասցեյին: Ծառերի աղբեցութեան տակ գաղաղած խուժանը, դաշնակցական բժ. Բաղդասարյանի առաջնորդութեամբ աղմկարար թափորով շարժվում և կայարան կառավարութեան հրամանի դեմ ըմբոստացած զրահապատը գրավելու համար:

Կայարանում հակահեղափոխական այդ վոհմակը, նկատելով զրահակիր աշտարակների վրա պատացող թնդանոթի բերանը, տեղահան և լինում ու սկսում փախչել: Մնացորդները, միքանի տամնյակ հոգի, «քաջաբար» մոտենում են զրահապատին և «հայ ժողովրդի» անունից ցանկութեան հայտնում «տեսնվել» Մուսայելյանի հետ: Վերջինս պատասխանում և, վոր սպեկուլյանտների հետ բանակցութեանների մեջ մտնելու ցանկութեան չունի: Բողոքողները հեռանում են: Զրահապատի մոտ խմբված յերկաթուղային բանվորների «Խնտերնացիոնալը» գլխիկոր քաղքենիների ականջին հնչում և վորպես մահերգ: Բայց, չնայած դրան, քաղաքում շարունակում են գրութեան տեր լինել դարձյալ դաշնակցականները: Զնչին ուժերով մայիսի 9-ին Հեղկոմը փորձում և գրավել Կաղաչի պոստը, վորտեղ ամերիկյան վորքանոցներն ու պահեստներն էյին տեղավորված: Այստեղ գրված պահակները դիմադրում են և Կաղաչի պոստը մնում և հակահեղափոխականների ձեռքին: Կոմունիստների անգործութեանից խրախուսված, մայիսի 10-ին դաշնակցականները փորձում են պատերազմական գրութեան ստեղծել քաղաքում, հարձակման անցնելու համար: Կարգադրում են փակել խանութները: Գրական վարակի առաջն առնելու համար գոցված տպարանների առաջ պահակներ են դնում: Կոմունիստների կյանքը քաղաքում վտանգի տակ էր: Ապստամբութեան պատահաբար փարատելու համար բարեպաշտ խանութպանները դիմում են մագիստրոս Մեսրոպ յեպիսկոպոսին և խնդրում փողոցային թափոր կազմակերպել «տիրամոր» Յոթն վիրաց պատկերով... Համալսարանի դասախոս Գարեգին յեպիսկոպոսը դիմում և կայարան խնդրելու Մուսայելյանին յետ կենալ «յեղբայրասպան» կովի ասպարեղից... Բայց առայժմ բոլոր այս միջոցները անողուտ էյին արդեն, անողուտ անգամ՝ Ալեքսանդրապոլի ամենակարող Յոթն-վերքը...

Դեռ մայիսի 9-ին էր, վոր տաճկահայ բամկավարականների ներկայացուցիչ Հակոբ Եֆենդին և խմբապետ Սմբատ դիմելով Հեղկոմ, յուրայինների կողմից «չեզոքութեան» խոստացան: Նույն որը քաղաքում գտնված բոլոր սպաները ժողով են գումարում և վորոշում են խորհրդային իշխանութեան կողմն անցնել: Հաջորդ որը առավոտյան Հեղկոմը վերջնադիր և ուղարկում քաղաքային վարչութեանը, առաջարկելով նրան յինթարկվել խորհրդային իշխանութեանը և շարունակել իր աշխատանքները: Քաղաքային վարչութեանը նույն որը հայտնեց, վոր «պատասխանելու լիազորութեան չունի»: Հեղկոմը հարկադրված յեղավ, վերջնապես, զինվորական ուժ գործադրել: Կեսորից հետո քաղաք են մտնում միլիցիան, մոտ 60 հոգուց բաղկացած բանվորական զվարդիան և մի ձիավոր դասակ Զինված ուժեր ուղարկ-

վեցին «Կաղաչի պոստ»: Դիմադրութեան փորձ չանելով, պահակը փախուստի դիմեց: Թեթե հրացանաձգութեան յեղավ միայն բանտի մոտ, վորտեղ բանտարկյալները փշրել էյին բանտի դռները և փողոց թափվել: Հակահեղափոխական տարրերի լուրջ դիմադրութեան մասին խոսք լինել չեր կարող: Հեղկոմի լիազորները ընդունեցին և կնքեցին բոլոր պահեստները ու պահակ դրին հիմնարկների առաջ: Զինվորական հսկումն նշանակվեց նաև քաղաքի շուրջը: Յերեսիյան, առանձին թուղթիկով հեղկոմն անձնատուր լինելու պահանջ արեց քաղաքում թաքնված բժ. Բաղդասարյանին, Կարո Մասունուն, Ստամբուլյանին և հակահեղափոխական մյուս ղեկավարներին:

VIII

Կատարված հեղաշրջումը խանդավառութեամբ ընդունեց ամենից առաջ զորքը, վոր արդեն կարմիր բանակային կոչումներ էր յուրացրել: Ուշագրավ և զինվորական մասսաների այդ որերի տրամադրութեան մասին դաշնակցական «արտակարգ հանձնաժողովի» անգամ գնդապետ Արսեն Շահմազյանի մի վկայութեանը: «Մայիսի 8-ին, — հայտնում և «Հառաջ»-ի ըզթակցին միքանի որ անց Շահմազյանը, — գնացինք բերդ, այնտեղ էյին զրահապատ գնացքից յեկած զինվորահեղափոխական կոմիտեյի անդամներից շատերը: Զուգեցինք ճառեր խոսել, միտինգի բնավորութեան շտալու համար, այլ յերկու խմբի բաժանված, մի կողմը յես, մյուս կողմը Մասունին, խոսեցնել էյինք ուզում զինվորներին: Վոչ մի պատասխան չենք տալու ձեր հարցերին, քանի՜ ձեռ մնում և ներկա կառավարութեանը: Յերկու տարի յե մենք պահանջներ ենք ներկայացնում շարունակ և այդքան ժամանակամիջոցում մեր պահանջներից վոչ մեկը չե բավարարված: Մենք ձեզ չենք ուզում լսել, մենք ուզում ենք լսել մեր զինվոր ընկերին: Այս աղաղակից հետո մի զինվոր բարձրացավ մի բարձր տեղ և սկսեց խոսել: Այդ խառնակ խոսակցութեանը մի վայրկյանում միտինգի վերածվեց: Նկատելի յեր խիստ կարգապահութեան: Սոսողը գրվատեց բոլշևիզմից սպասվող բոլոր բարեքները և այդ բոլորի մեջ նրանից սպասվող համաշխարհային խաղաղութեանը: — Մենք կարող ենք խաղաղութեան բերել բոլորին, ինչպես և հայ ժողովրդին: Այդ խոսքերի վրա. — կեցցե սովետական իշխանութեանը. — կորչի Դաշնակցութեանը — աղաղակը թնդացրեց ողբ: Այդ միջոցին մեր յետևում մի զինվոր պաշտպանել էր Դաշնակցութեանը, բոլորը հարձակվեցան նրա վրա: Վոմանք էլ պոռալ սկսան. — Դեպի կաղարմա. — Ի զեն: Ամենքը խառն ի խուռը՝ վազեցին ու ցրվեցին»: Հեղափոխական այս բարձր տրամադրութեան ունեք նաև զավեշտական մանրամասներ: Նույն Շահմազյանը նկատում և. «Տարորինակ էր գործի ըմբռնողութեանը այդ հեղաշրջումի մասին: Մի տեղ գորքը տողանց և կատարում և միաձայն պոռում. «Կեցցե Սովետը, կորչի Դաշնակցութեանը». միևնույն ժամանակ յերգում և «Դաշնակցական խուժը» յերգը: Երջապատը ծափահարում և և այն կոչի և այս յերգի համար»:

Գարնիդուի պեսն ու սպայական կազմը հպատակութեան են հայտնում Հեղկոմին: Հրամանատարական կազմի այդ ընթացքը բացատրութեան և գտնում վոչ միայն գորքի ընդհանուր տրամադրութեան մեջ, այլև դաշնակցականների վարած քաղաքականութեան մեջ: Սպայական կազմի ժողով գումարելով, Կարո Մասունին, Յերեսի կառավարութեան ներկայացուցիչը, հորդորել էր հավատարիմ կենալ դաշնակցականներին, քանի վոր բոլշևիկ-

ներս, ուժ չունեն և դրսից ևլ ոգնութիւն չեն ստանում: «Յեթն յե-
րեար թեկուզ հենց մի հատիկ ռուս զինվոր, կառավարութիւնն ինքը անձ-
նատուր կլինէր նրան» — հայտարարել էր Սասունին: «Արժէր դրանից հետո, —
պատմում է ժողովին մասնակցողներից մինը, հեծելազորի պետ Մելիք-Շահ-
նազարյանը: — քաղաքի շուրջը մի կառավարութիւն, վոր հայրենիքի
պաշտպանութիւն քարոզ կարդալով մեզ՝ պատրաստվում էր նետով թշնա-
մու գիրկը, հենց վոր յերեար սահմանի վրա սրա առաջին զինվորը»:

Հեղափոխական տրամադրութիւն էր տիրում նաև ժողովրդական լայն
մասսաների ծաղրերում: Բազմաթիւ հայ, թուրք, մոլոկան քաղաքացիների
ներկայացուցիչներ վողջունում են հեղափոխական կառավարութիւնը, ո-
ժանդակելու պատրաստակամութիւն հայտնում: Իրանց ուժերը Հեղկոմին
տրամադրելու ցանկութիւն հայտնեցին անգամ «սովետական պլատֆորմ
ընդունող» ես-երներն ու սոցիալ-դեմոկրատները: Բնորոշ է, վոր բոլշևիկյան
ռեկվիզիցիաների ուրվականից սարսափահար խանութպանները հացի գինը
150 բուրլուց 60-ի իջեցրին: Հեղափոխութիւնը արձագանգ գտավ նաև
գյուղերում: Ալեքսանդրապոլի գավառում գյուղացիներն ինքնաբերաբար հե-
ռացնում էին կառավարութիւն հին պաշտոնյաներին, նորերին կարգում:
Կառավարական հին որդանների տեղ կազմակերպվում են հեղկոմներ: Շատ
տեղ, ինչպէս, հեղափոխական այդ ակտն արտահայտվում էր նրանով, վոր
հին հիմնարկները, գրեթե անփոփոխ կազմով, նոր հորջորջումներ ընդունե-
ցին: Բացառիկ աշխատանք սկսվեց սակայն յերկրորդ գավառամասում՝ Բալ-
թաւուի շրջանում: Այստեղ ապստամբութիւն գլուխ էր անցել կուսակցա-
կան ընկեր բժիշկ Փանյանը: Դեռ մայիսի մեկին գավառամասի կենտրոնում
գտնւած միտինգը կոմսոնիստական լողունգների տակ անցավ: Հեղաշրջ-
ման որերին այստեղ կազմակերպվեցին զինված խմբեր, վոր նպատակ էին
հետապնդում հեղափոխական կարգ հաստատել շրջանում, մաքրել այն քա-
ղաքից փախած հակահեղափոխական տարրերից: Գյուղերում կազմակերպ-
ված հեղկոմները սկսեցին հաշիւ առնել գավառամասի զենքերը, ձիերը, ա-
նասունները, սրբինային և սերմանման պահեստները, ձեռնարկեցին սեր-
մացու բաց թողնել աղքատներին և այլն:

Այս բոլորը կատարվում էր տեղերում առանց Ալեքսանդրապոլի ղեկա-
վարութիւնի: Գյուղերն ու շրջանները թողնված էին «հեղափոխական բը-
նազդի» տնորինութիւն: Չկար կապ, չկար ինֆորմացիա: Ապստամբութիւն
ամբողջ ընթացքում Ալեքսանդրապոլում հազիւ յերկու-յերեք թուղցիկ հրա-
տարակվեց, իսկ լրագիր և վոչ մի համար: Գյուղերում ազիտացիա չէր
տարվում: Չէին ստացվում ցուցմունքներ, հրահանգներ, կազմակերպող և
ղեկավարող ուժեր: Մարդ չկա, փորձված աշխատակիցներ չկան — ահա ընդ-
հանուր տրտունջը: Յեւ կարող ու գործոն ուժերի պակասը ամենից շատ
հենց կենտրոնում էր զգացվում: Գավառային կոմիտար, միլիցիայի և այլ
կարգի նորընծա պաշտոնյաներ՝ չերեացին անգամ քաղաքում: Հեղաշրջման
որերին շարունակ նստած զրահապատում կամ կայարանի մայթերը մա-
շելով, սրանք մատնված էին սրապ ժամանցի կամ զբոսայտ բացառապէս
զբոսից հասած լուրերի վորում: Վրանք հնարավորութիւն ստացան յերեւոյ
միայն զորանոցներում և միտինգի ամբիոնների վրա: Թույլ և տարտամ
գործունեյութիւն ցույց տվեց ինքը կենտրոնական իշխանութիւնը: Շատա-
նալով այս կամ այն պատահական նշանակումով, Հեղկոմը չկարողացավ
հարկադրել աշխատակիցներին գործի կենտ, հանդես բերել նախաձեռնու-
թիւն, կազմակերպել իշխանութիւն ապարատ: Վրա վրա արվող Հեղկոմի

այս կամ այն անդամի կարգադրութիւնը պատահական էր: Ըստ բովանդա-
կութիւն, հակասող ուրիշ վորեւէ կարգադրութիւն կամ ներհակող վայրկյանի
պահանջին: Յերեանի կառավարութիւնը... չէր յենթարկվում: Քաղաքի
դաշնակցական ղեկավարները... անձնատուր չեղան: Կարեւոր ղեմքերն անհե-
տացել էին: տակավին մայիսի 10-ից առաջ: Ձերբակալվածները արձակվում
են վեհանձնորին՝ հնարավորութիւն ստանալով վերսկսել իրանց սե աշխա-
տանքը: Տեւորի վտանգը չէր անցել տակավին: Հեղկոմի մեջ ուժ և առնում
չիւթն ու վարանը: Յեւ ստացվում էր այն ապստամբութիւնը, վոր հեղա-
շրջումը անցողակի մի պատահաւ և լոկ, վոր նոր իշխանութիւնը գոյու-
թիւն կովաններ չունի, վոր Հեղկոմն իսկ վախենում է հարադատ շվաքից:
վոր իրանք իսկ կոմսոնիստները չեն վստահ տարած հաղթութիւնը:
Ապարեղը դարձյալ կառավարական հին պաշտոնյաներին մնաց: Սա-
կայն սրանք ևս խուսափում էին գործից: Դաշնակցական կոմիտեն
թուղցիկ էր բաց թողել, վորտէլ հորդորում էր չաշխատել բոլշևիկների
համար, հակառակ դեպքում սպառնում էր հեռացնել պաշտոնից, զրկել ուժ-
կից, կամ ուղղակի՝ տեւորի տալ: Այս եր յերեւել պատճառը, վոր «բարյա-
ցակամ» ես-եր կամ ես-դեկ աշխատակիցների կարիքն զգացվեց: Լեւո Սար-
գսյան և պատմական միջնադարի նման տիպի հերոսներ այդ որերին ևս
յերեացին քաղաքական հորիզոնի վրա: Սակայն գալիք որերի հեռանկարը
դեռ չէր պարզվել լիովին և հեղափոխութիւն հեռատես խնամինները բարե-
կամութիւն դատարկ ծիսակատարութիւններից հետո գործի պահին բռնե-
ցին նահանջի խոհեմ ուղին...

Անգործութիւն էր մատնված ամենից առաջ զորքը: Հետախուզութիւն
համար Ալեքսանդրապոլ-Յերեան զծով հետ ու առաջ էր շարժվում միայն
զրահապատի այն մասը, վոր Յեւանդուլյանի առաջնորդութիւնը ժամանել
էր միքանի որ առաջ Ալեքսանդրապոլ: Մայիսի 11-ին զրահապատի այդ
մասը փորելի բաղնում էր ունեցել հակառակորդ ուժերի հետ Ալազղազ կա-
յարանի մոտ, մի յերկու գերի յեր վերցրել: միքանի զոհ տվել ու դիմա-
դրութիւն համար վոչինչ ուժ չունենալով՝ նահանջել: Հաջորդաբար կրճա-
տելով հետախուզութիւն գիծը, մայիսի 11-ի և 12-ի ընթացքում Յեւանդու-
լյանը Բայանդուր կամ Աղին կայարաններից դէնը չէր անցնում: Իսկ մինչ
այդ միշտ ավելի ու ավելի սեղմելով հարձակման ողակը, չհանդիպելով վո-
չինչ դիմադրութիւն, մոտենում էին Ալեքսանդրապոլին թշնամու զինված
ուժերը:

IX

Ռանջանյանի կառավարութիւնը կարողացավ բավականաչափ յեռանդ
գործադրել վճռական այս պայքարին իրեն նպաստավոր ընթացք տալու հա-
մար: Հրահանջով աղքատական ազիտացիան, Հայաստանի կառավարութիւնը
նպատակ էր դրել իրան նախ և առաջ բորբոքել քաղքենու «հայրենասեր»
ընադդները: «Հառաջ»-ը հողվածներ էր տպում... առերևույթս Խորհրդային
վարչաձև ընդունած Աղբրեջանի ծպտյալ մուսավաթականների պանիսլամա-
կան քաղաքականութիւն մասին: Առատորեն ստեր են ցանում Աղբրեջանի
ռազմական նախապատրաստութիւնների, անգամ Հայաստանին պատերազմ
հայտարարելու մասին: Հեռանկարն ավելի սարսափելի դարձնելու համար
դաշնակցական ազիտատորներն ու զրչակներն այն միտքն են արձարծում,
թե հայերի դեմ Աղբրեջանի հետ համերաշխ գործում են ուսաները, տաճիկ-

ները և Հայաստանի թուրքերը Սկսվում և կատարել պրովոկացիա այն մասին, վոր հայ բոլշևիկները թուրքերի և տաճիկների կաշառված ագենտներն են, և վոր բռնկած ապստամբությունը Տաճկաստանի և Սղրքեջանի նացիոնալիստական քաղաքականության պտուղն է: Խմբապետ Սեպուհը Մարդարա գյուղում հայտարարում էր, թե Աղբաբայի շրջանում թուրքերը բոլշևիկների հետ միացած կոտորում են Շիրակի հայերին: Ալեքսանդրապոլում դաշնակցական ագենտները լուր են տարածում այն մասին, վոր Յերեանի կոմսոնիստները Զանգիբասարի թուրքերի հետ միանալով հարձակում են գործել մայրաքաղաքի վրա:

Դաշնակցության ղեկավար շրջանները շատ լավ էյին հասկանում բոլոր այս հայտարարությունների արժեքը: Արտ. Դարբինյանը, դաշնակցական հակահեղափոխության գլխավոր տեսարանն ու ղեկավարող դեմքերից մեկը, այդ իսկ որերին, գրի առնելով իր «Հայաստանն ու բոլշևիզմը» վերատառություն ունեցող պամֆլետը, գտնում էր, վոր Հայաստանի հեղափոխության շարժիչ ուժերը գործում էյին յերկրի ներսում, իսկ զրսից ստացվող «վերջնագրերը» նպատակ ունեյին միայն շփոթության մեջ ձգել դաշնակցականներին: «Վոչ Աղբաբայի կարող էր մեր դեմ նոր գործեր ուղարկել, վոչ էլ ուրիշ բոլշևիկները: Ռազմական ուժերի փոխհարաբերությունը Անդրկովկասում մնում էր նույնը: Ուստի թե թուրքական և թե ռուսական սպառնալիքների յիտեում չեր կարող լինել վորեւ լուրջ իրական վտանգ, վորի վախի տակ Հայաստանի կառավարությունը հարկադրված զգար իրան անձնատուր լինելու: Այդ գիտակցությունը չեր խանգարում դաշնակցականներին շարժվել և ամիսներ շարունակ «արտաքին վտանգի» մղձավանջ ստեղծել Հայաստանում, քանի վոր այդ մղձավանջն էր կարող նըպաստավոր մթնոլորտ դառնալ նրանց ներքին նպատակների համար: Դաշնակցականներին չհաջողվեց այնուամենայնիվ պրովոկացիոն միջոցներով «ազդմական տրամադրություն» ներշնչել Հայաստանի ղինվորություն: Աղբաբայի, Թուրքիայի կամ Ռուսաստանի դեմ ձեռնարկվող պատերազմի հեռանկարը, անկախ իր քաղաքական բովանդակությունից, չեր կարող խանգարվածության աղբյուր դառնալ Հայաստանի թույլ ու հոգնած բանակի համար: Զորքը մեծ մասամբ կոմսոնիստների կողմն էր կամ, լավ դեպքում, անտարբեր էր դեպի դաշնակցական լողունները: Ապստամբության դեմ կարելի չեր գործել հենված բացառապես կամավոր խմբերի ու զորահավաքի յնթարկված դաշնակցական հավատարիմների վրա: Բյուրոյականները ղիտեյին այդ և, գործի գլուխ անցնելով, ձեռնարկեցին կազմակերպել այդ ուժերը: Տաճկահայ սպեկուլյանտներ, մաուզերիստներ, խմբապետների ձեռքի տակ մեծացած «տղերք», ազգասիր ուսանողներ ու տնգամ մանկահասակ գիմնազիստներ—ահա այն տարրերը, վոր արձագանգ տալով կառավարության կոչերին, կամովին խտացան հակահեղափոխության յեռագույն դրոշի շուրջը: Հենված այդ ուժերի վրա, Հայաստանի փաստական ղիկատառը, Ռուսին Փաշան, լքեց սպասողական դիրքը և հարձակման անցավ, հարկավ վոչ թե «հայտայաց» թուրքերի, այլ «թրքասեր» հայերի—բոլշևիկների դեմ:

Դեռ մայիսի 6-ին լույս 7-ը գիշերն էր, վոր կառավարությունը սկսեց ձերբակալել Յերեանի կոմսոնիստներին: Մայիսի 7-ին դաշնակցականները ցրվում են «Գյուղացու ձայն» թերթի շարվածքը ու խափանում հրատարակությունը: Նույն օրը բանտարկվում են մոտ 20 կոմսոնիստ բանվոր: Բնորոշ և, վոր այդ գործողությունները կատարում էյին վոչ թե կառավարական

որդաններ, այլ Դաշնակցության անդամների ձեռքով: «Հայերենիքի համար ծանր այս վայրկյանին» դաշնակցական յուրաքանչյուր քաղքենի, ցասումի զգացումով լի, պարտավորվում էր հրապարակ գալ վորպես «կարգ ու կանոնի» պահպան հրեշտակ: Ծեծն ու բռնեցքը դարձան նորից քաղաքացիական պրովոկացիա առաքինության հայտարար: Բայց «արտակարգ» ժամանակներ էյին, ուստի և անհրաժեշտ պատժի ավելի ազդու միջոցներ: Մայիսի 3-ին ընդունված «արտակարգ որենքը» մահապատիժ սահմանեց քաղաքական հանցավորների համար: Կազմակերպվեցին ղինվորա-դաշտային հատուկ դատարաններ «արտակարգ որենքը» կենսագործելու համար: Սակայն մինչպիսիք արդեն իսկ որենքից դուրս էյին հայտարարվում ապստամբությունների ղեկավարները: Ապստամբության ընթացքում սահմանված «արտակարգ որենքներն» ու «արտակարգ դատարանները» պետք է գործեյին փաստորեն միայն ապստամբության սոսկական հանցավորների վերաբերմամբ:

X

Ալեքսանդրապոլի հեղաշրջումն այնուամենայնիվ արձագանգ գտավ Հայաստանի տարբեր անկյուններում ու ամենից առաջ՝ սահմանամերձ Դարսում ու Սարիղամիշում:

Ալեքսանդրապոլից ստացված հրահանգի համաձայն մայիսի 9-ի յերեկոյան Դարսի կոմսոնիստական կազմակերպությունը, հիմնական ունենալով քաղաքի բանվորությունն ու ղինվորական մասերի տրամադրությունը, վորոշեց ապստամբության դրոշը պարզել դաշնակցական կառավարության դեմ: Մեծ վոգեկորություն էր ներշնչել Մուսայելյանի խոստումը՝ հաջորդ օրը զրահապատով Դարս ժամանելու մասին: Տեղում կազմված Ռազմահեղափոխական կոմիտեն հայտարարեց Հայաստանը խորհրդային հռչակելու ակտի մասին, նախապատրաստական աշխատանքներ սկսեց զորքի մեջ և միաժամանակ միջոցներ ձեռք առավ քաղաքում հեղափոխական կարգ հաստատելու համար: Դիշերը կոմիտեյի անունից պահակներ ղրվեցին կայարանի, փոստ-հեռագրատան, գանձարանի և պարենային պահեստների առաջ: Դարսի քաղքենիները շմեկով կոմսոնիստների արագ գործողություններին, ղրվեցին հեղաշրջման կատարված փաստի առաջ:

Մայիսի 10-ին առավոտը հեղաշրջման շուրջիկները հասան Դարսի ֆորտերին: Մեկը մյուսի յիտեից կարմիր դրոշակներ պարզվեցին Բուչկի-Լի, Լորիս-Մելիքովի, Ալեքսանդր 2-ի, Շատիրովի և Ֆադդեյևի ֆորտերից: Մյուս ֆորտերը, սպայական կազմի և թնդանոթածիգների մի մասի հետ սպասողական դիրք զբաղեցին: Հայտնեցին, թե դեմ են արյունահեղության և վոչ մի կերպ դենք չեն բարձրացնի «հայի» դեմ: Այնուամենայնիվ բերդում ղետեղված մոտ 800 սվիչների մեծ մասը ապստամբության կողմն անցավ ու պատրաստակամություն հայտնեց գործողություններ սկսել դաշնակցականների դեմ:

Հեղաշրջման ժամանակ պետական ամբողջ պաշտոնյությունը մնաց հին տեղերում: Մտադրություն կար բանտարկել միլիցիայի պետին, նահանգապետ Դորդանյանին, քաղաքապետ Նորհատյանին, գեներալ Փիրումովին և հին կարգերի մյուս պատվելիներին: Սակայն զրահապատների փոխարեն Մուսայելյանից ստացված հեռագիրը վճռական տոնով հրահանգում էր խուսափել արյունահեղությունից ու բանտարկություններից և աշխատել

համաձայնության դալ այդ մարդկանց հետ: Այդ հիման վրա մայիսի 10-ին Ռադմա-հեղափոխական կոմիտեն վերջնազիր ուղղեց վերոգրյալ պաշտոնյաներին, առաջարկելով մինչև հաջորդ որվա առավոտը խզել բոլոր կապերը Յերևանի կառավարության հետ ու նոր իշխանությանը հպատակվելու պայմանով շարունակել իրենց պաշտոնավարությունը: Աղբյուրների ղեկավարությունումը դաշնակցականները խորհրդակցություն են կազմում, վորտեղ, ինչպես վկայում է դաշնակցականների պաշտոնական հաղորդագրությունը, «քաղաքացիական կռիվ կարելիությունը քննելով յերևաց, վոր դա այժմ դրական հետևանքներ չի տա, վորովհետև մոլորությունը ըմբոստացած գաղութներին հակադրելու ուժերը քաղաքում չնչին են»: Զորքերի վրա ազդեցություն ունենալու և «սահմանները պաշտպանելու» նպատակով, վորոշվում է վոր սպայությունը առերես հպատակվի Ռադմա-հեղափոխական կոմիտեին: Նույնը պետք է անել և քաղաքացիական իշխանությունը «յուր կազմը չքայքայելու համար»:

Մայիսի 10-ին իշխանության խնդիրը, այսպիսով, դեռ չէր լուծվել փաստորեն: Քաղաքում ստեղծվել էր վերին աստիճանի լարված դրություն: Հայտարարվել էր նոր իշխանություն, սակայն հնի ներկայացուցիչները տակավին հրապարակի վրա էյին: Կողմերը նախապատրաստական աշխատանքներ էյին տանում տակավին: Կոմիտեի ատները միտինգ կազմեցին ղեկավարի խմբավորման անդամներին բացատրելու համար: Սակայն նույնն արեց նաև դաշնակցական «արտակարգ հանձնաժողովը» անդամ Նիկոլ Աղբալյանը, վորը, հրապարակական միտինգ գումարելով, քաղքենիների և անգրտակից զինվորների շովեն տրամադրությունները գրգռող ճառ արտասանեց կոմիտեի ատների «ազգավեր» գործողությունների մասին: Դեպքերը գալիս էյին ավելի ևս ուժ տալու դաշնակցական պրովոկացիային: Նույն մայիսի 10-ին Ղարսում գտնված ռուս, թուրք և հույն ազգային խորհուրդները ընդհանուր նիստ գումարելով վորոշեցին ճանաչել հեղափոխական իշխանությունը: «Համալրելով ներկա կարգը ժողովրդի համար կորստաբեր, ասված է ժողովրդի արձանագրության մեջ, դիմում ենք նոր հոսանքին: Մեր ժամանակվա իշխանությունները համարում ենք անհույս և ֆյասակար, ուստի ուղղելով խորհրդաներից ընտրված մեր ներկայացուցիչների հայացքը ղեպի նոր հոսանքը, ներկայացուցիչներն ոգնություն են խնդրում իրագործելու մեր հույսերը, խոստանալով նրանց հետ համաձայնեցնել մեր գործելակերպը և հրաժարվել մեր ժամանակի իշխանությունից»: Համերաշխ գործողությունների նպատակով վորոշվեց ընդհանուր կենտրոն ստեղծել ազգային յերեք խորհուրդների համար: Ռուս ազգային խորհուրդը նույն օրը կոչ է ուղղում ռուս ազգաբնակչության, վորով հրավիրում է ոժանդակել խորհրդային իշխանությանը: Այդ նպատակով հրահրում է մարտական խմբեր կազմել ամենուրեք և պատգամավորներ ուղարկել Ղարս՝ ստեղծված դրության մասին խորհրդակցելու համար:

Ռուս ազգային խորհրդի ղեկավարությունը ազգային փոքրամասնությունների «բարյացակամ» այս վերաբերմունքը ղեպի նոր իշխանությունը ավելի ևս հրահրեց հակահեղափոխականների աշխատանքը, ազգային խորհրդի ընթացքը բորբոքելով հայ ազգայինների շովինիզմը ու ծանր մթնոլորտ ստեղծեց հեղափոխական կոմիտեի համար: Դրան ավելանում էր դաշնակցականների ազիտացիան այն մասին, վոր իբր կոմիտեն կաշառված է տաճիկների, մոլդանների ու Աղբալյան թուրքերի կողմից և նման կարգի այլ ցնդարանություններ: Մայիսի 10-ին, կեսօրից հետո, հակահեղափոխական այս ազիտացիայից շիկացած մանուկներստների մի խումբ խնուսցի գաղթականների

գլուխն անցած խոնվում է շտաբի առաջ, փորձելով ներս խուժել և ցանցել տպատամբության ղեկավարներին: Փորձը վիժեց: Սակայն այս հանգամանքը դեռ չը բարեփոխեց կոմիտեի դրությունը: Յերևանյան պարտային վաշտը, կամենալով ապահովել հեղափոխության դիրքերը, պահակային բառալոյնից չորս պուլեմյոտ խլեց: Այս հանգամանքը վրդովեց վերջինիս, ավելի ևս սրելով յերկպառակությունը զորքի մեջ:

Հաջորդ օրը, մայիսի 11-ին, գյուղերից հավաքված թուրք և մոլդան պատգամավորները քաղաք մտնելով, համակրական ցույց են անում զարածի առաջ, վորտեղ Ռադմա-հեղափոխական կոմիտեն էր տեղավորվել: Պատգամավորները յեկել էյին պատրաստակամություն հայտնելու՝ միացած ուժերով դաշնակցական կառավարության դեմ կռվելու համար: Չնայած կրիտիկական դրության, տակտիկական նկատառումներով կոմիտեն մերժեց այդ առաջարկը, հույս դնելով բացառապես սեփական ուժերի և Ալեքսանդրապոլից տակավին սպասվող ոժանդակության վրա: Սակայն թուրքերի և մոլդանների ցույցը նորից բորբոքեց հակա-հեղափոխական ռեակցիան: Ռադմա-հեղափոխական կոմիտեին առերես հպատակություն հայտնելուց հետո իսկ զենք, Փիրումովը և իր ոֆիցերներն աշխատանք էյին տանում շրջակա հայ գյուղերի գաղթականների շրջանում, վորտեղ տաճիկայերից կովող խմբեր էյին կազմակերպվում կոմիտեիստների դեմ: Հակա-հեղափոխական այդ ուժերը մոտենալով քաղաքին, գրավեցին կայարանը և նորից փորձ արին շրջապատել զարածում տեղավորված հեղափոխական շտաբը: Յերևանի անգամ կասեցնելով հակա-հեղափոխականների փորձը, կոմիտեն այնուամենայնիվ հարկադրվում է, ապահովության համար, փոխադրել բոլոր իր ուժերը Ալեքսանդր II-ի ֆորտը: Սա նշանակում էր, թե կոմիտեն պետք է կորցնեք իր կապը դրա աշխարհի և ամենից առաջ Ալեքսանդրապոլի հետ, վորտեղից ժամ առ ժամ սպասվում էր Մուսայելյանի զրահապատը: Ոգնությունը չէր հասնում, իսկ քաղաքում և շրջակայքում բացարձակ կազմակերպվում էյին հակա-հեղափոխական ուժերը, պատրաստվելով նոր հարձակման: Ծորտերից կոմիտեն շարունակում էր հրամաններ ուղղել քաղաքային հիմնարկներին, սակայն քաղաքում իշխանությունը փաստորեն նորից հին տերերի ձեռքում էր: Դիմելով Փիրումովը սպայական կազմի հետ բաց և արձակ ղեկավարում էյին հակահեղափոխական ուժերի կազմակերպությունը: Դաշնակցական ազիտացիան նվաճել էր ամբողջովին պահակային բառալոյնը, ազդեցություն ողակի մեջ էր առել սպասողական դրության մեջ գտնվող ֆորտերը և սկսել էր լքում առաջացնել նաև հեղափոխության կոչին անցած զորաշարքերում: Մայիսի 12-ին, առավոտը, դաշնակցականները կազմում են քաղաքում «Հայրենիքի Փրկության կոմիտե», վոր «կարգ» է վերահաստատում և կարմիր ֆորտերի վրա հարձակվելու վորոշում ընդունում: Նույն օրն սկսվում է հեղափոխական և հակահեղափոխական ուժերի վճռական կռիվը:

XI

Ավելի նպաստավոր դրություն ստեղծվեց հեղափոխական ուժերի համար Սարիգամիշում: Շարժման հենակետներն այստեղ յերկաթուղու և սղոցարանի բանվորներն էյին և մանավանդ տեղում գտնված հայկական բանակի չորրորդ գունդը, վոր դեռևս ապրիլի կեսերին հոգեբա-

նորէն նախապատրաստուելով գալիք ասպատամբութեան համար, զենքը ձեռին ըմբոստացաւ հրամանատարական կազմի դեմ՝ պաշտպանութեան տակ առնելով ձերբակալված կոմմունիստ գինովորներին։ Ասպատամբութեանը բռնկեց այստեղ Ալեքսանդրապոլի ազդանշանով մայիսի 11-ին։ Սնդրանիկ Զուլուբյանի նախագահութեամբ տեղում կազմված Հեղկոմը սկզբից և եթ կարուկ միջոցների դիմեց չեղորացնելու վտանգավոր դաշնակցականներին և իր հերթին ամբանալ կայարանում, վոր ասպատամբութեան համար կարեւորութեան ունեւ նախ և առաջ ուղղմական գործողութեանների տեսակետից։ Կայարանում չորս որվա ընթացքում Հեղկոմը կառուցեց ավազն միջնորմով պաշտպանված մի վագոն, վոր պետք և ողտագործվեր հակառակորդ ուժերի դեմ։ Յերկյուղ կրելով ֆրոնտի մերկացումից, քաղքենի մասսաները սկզբից և եթ թշնամական դիրք ընդունեցին դեպի Հեղկոմը։ Տաճկական վտանգն այստեղ ևս խարխալ դարձաւ հակահեղափոխական ագիտացիայի համար։ Այդ չխանգարեց Հեղկոմին մշակել տաճիկների հետ ասպատամբութեան շահերին նպաստավոր հարաբերութեաններ։ Պարենի պակասն զգալի եր ասպատամբութեան առաջին որվանից։ Հեղկոմը շտապեց լուծել պարենային խնդիրը և բանակցութեաններ ձեռնարկեց սահմանագլխի տաճիկների հետ ասպանքափոխանակութեան սկսելու համար։ Հեղկոմը խոստանում եր տաճիկներին յերկաթուղու շապլներ, փոխարենը հաց պահանջում։ Համաձայնութեանը գլուխ յեկավ։ Սակայն մինչայդ Ալեքսանդրապոլում և Ղարսում ստեղծված վիճակը յեկավ անդրադառնալու նաև Սարիղամիշի վրա։ Հեղափոխութեան համար նպաստավոր ուժերի ներքին փոխ-հարաբերութեանը պիտի շրջվեր, արտաքին ուժերի այն աննպաստ դասավորութեան շնորհիվ, վոր տեղի ունեւ Սարիղամիշից դուրս։

XII

Պարենային ծանր ճգնաժամը հարկադրել էր հեղափոխական ուժերին առաջ քաշել իշխանությունը գրավելու խնդիրը։ Գրավելով իշխանությունը նույն ուժերը յերես առ յերես պետք է հանդիպեին յերկրում ստեղծված պարենային ծանր կացության հետ։ Արմատական կերպով կարող էր լուծել պարենային խնդիրը դրսի ոգնությունը։ Սակայն անմիջապես շոշափելի ոգնություն սպասել դրսից անհնարին էր։ Անհրաժեշտ էր գործ դնել բոլոր տեսակի հնարքները ոգտագործելու տեղում յեղած ռեսուրսները։ Փրկել թաւանից պետական և հասարակական պաշարը, բռնագրավել մասնավոր պահեստները, կազմակերպել յեղած պարենի նպատակահարմար բաշխում, ահա պարենային քաղաքականության հերթական խնդիրները։ Իշխանությունը զբաղվելուց հետո պարզվեց, վոր Ալեքսանդրապոլի պետական պահեստներում կա միայն 4—5 որվա պաշար։ Հեղկոմը կարգադրեց գինավորների առորյա պարենը կիսել, իսկ ծառայողներին ալլես հաց չտալ։ Ակտիվ ընկերների պահանջով պարենային խնդրի մասին քաղաքում խորհրդակցություն յեղավ և պարզվեց, վոր ռեկվիզիցիայի ճանապարհով հնարավոր է դեռ 10—15 որվա պաշար պատրաստել։ Սակայն Հեղկոմը խոստովեց ռեկվիզիցիայի քաղաքականությունից, իսկ նրա անդամներից մեկը, Մեկքոնյանը, հանդատացրեց խորհրդակցողներին՝ հայտարարելով, վոր ամերիկացիները 60 վազոն ալլուր են խոստացել, Շուտով լուր հասավ այն մասին, վոր դաշակցական մի գումարտակ, ամբանալով Ղարաքիլիսայի շրջանում, քանդել է Զա-

Ջուլի մոտ յերկաթուղագիծը և Թիֆլիսից ստացվող ամերիկական ալյուրը
ֆուրգոններով և ավտոմոբիլներով Համամլիի և Դիրիջանի խճուղիների վրա-
յով Յերևան են փոխադրում:

Խնդիրն այն է, թե վերքան եր ճիշտ կամ սխալ այդ լուրը: Փաստ է համեմայն դեպս, վոր Ղարաքրիխան հակառակորդի ձեռքումն եր, իսկ վորեւ ոգնություն դրսից պետք է հասնեիր Ալեքսանդրապոլին այդ կողմից: Այստեղից պարզ է, վոր Ղարաքրիխայի գծին տիրանալը հրամայող անհրաժեշտությունն եր վոչ միայն պարենային նկատառումներով, այլև ուղմական տեսակետից: Ռազմական մի այդպիսի խնդիր լուծելու համար Հեղկոմի տրամադրության տակ բալականաչափ մարտական ուժեր կային: Ալեքսանդրապոլում կար յերկու հսկադրոն, վեց վաշտ հետեակ լիակատար կազմով, 12 գնդացիր, 8 թնդանոթ, մի զրահապատ գնացք: Այս բոլորը կազմում եր 500—600 հոգուց բաղկացած կանոնավոր մի բանակ: Թշնամին այդ ժամանակ հաղիվ միայն 60—70 ձիավոր ունեիր Ղարաքրիխայի շրջանում: Վճռական գործողություններով կարելի յեր կազմալուծել ու ցրել թշնամու առաջին զիմադրությունը և բաց անել հաղթության նոր հեռանկարներ:

«Այդ իսկ վայրկյանին Ղարսում ունեցած անհաջողությունը—գրում է ապստամբութեան կողմն անցած հեծելազորի առաջին գնդի պետ Մելիք-Շահնազարյանը—ոխակի հետ եր կապում Ալեքսանդրապոլի տակ բախվելու կարեկիտությունը: Բայց բոլոր ուժերով նահանջել Ղարաքիլիսա, գրավել Դիլիջանը (վորանդ այդ պահին գաբնիդոնի մեջ զորքերը սկսել էին կազմավորւածվել) և ապա հարձակում գործել Յերևանի վրա՝ ներքին Ախտաշի վրայով և Ալեքսանդրապոլի վրա՝ Համամլիի և Զաջուռի վրայով, վա՛յ միայն հնարավոր եր, այլև խոստանում եր հաջողութուն»: Պայքարի աննպաստ դասավորութեան դեպքում իսկ՝ Ղարաքիլիսայի գիծը և Ղարաքիլիսայի վրայով՝ Դիլիջանի խճուղին նահանջի միակ ճանապարհն եր Ալեքսանդրապոլի համար: Պետք եր ռազմական գործողութիւններ սկսել Ղարաքիլիսայի և Դիլիջանի ուղղութեամբ, շարժում առաջացնել Իջևանի և Նոր-Բայազետի շրջաններում և ըստ կարելոյն համազորձակցութիւն ստեղծելով Ղարսի ու Սարիղամիշի հետ, հարձակում սկսել Յերևանի և Ալեքսանդրապոլի վրա: Այս իմաստով Հեղկոմը գործողութիւնների ծրագիր եր ընդունել դեռ մայիսի 12-ին, յերեկոյան: Բայց միքանի ժամ անց Հեղկոմը փոխում է իր ծրագիրը ու վորոշում ամրանալ Կաղաչի պոստում և գործողութիւններ սկսել Բայանդուր Ռազիզդիի ուղղութեամբ:

Զինվորական մասերի տրամադրությունը մարտական եր տակավին մայիսի 12-ին: Սակայն շարունակ ձգձգելով վճռական գործողությունների ժամը, փոփոխելով շարունակ իր ուղղմական ծրագիրը՝ Հեղկոմը տարտամ տրամադրություն եր առաջացնում գորաշարքերում և մանավանդ անվտանգություն ներշնչում ղեկի ապստամբությունում ուժը սպայություն յերերուն շրջաններում: Նահանջելով հարձակման նպատակով փայլեկային՝ Հեղկոմն անդրություն առաջույց եր տալիս վոչ միայն իշխանության քաղաքացիական ապարատի կազմակերպություն գործում, այլև ուղղմական գործողություններ ղեկավարելու խնդրում: Իսկ յերը մայիսի 13-ի լուսաբացին Հեղկոմը հարձակման ղեմելու փորձ արեց, պարզվեց, վոր ուղղմական շտաբի ղեկը վստահելի ձեռքերում Հե: Դուրս յեկավ, վոր շտաբի պետ Կորգանովը, վորը կապեր ուներ գաղնակցականների հետ, հանցավոր հրամաններով ո-

դանդաղ զորաշարժերով աշխատում եր միայն ժամանակ վաստակել կազմակերպվող հակահեղափոխության համար:

Մինչև այդ դաշնակցական խմբերը, սեղմ ողակ կազմելով Ալեքսանդրապոլի շուրջը, մոտենում էին Ջաջուռ և Աղին կայարաններին: Հակամարտությունը դուրս եր գալիս տեղական գործողությունների նեղ շրջանակներից և մոտենում պայքարի ընդհանուր գծին: Տեղական ապստամբությունները բախտը պետք է նախորդվեր ընդհարումի ճակատագրական այդ գծի վրա:

XII

Ալեքսանդրապոլի, Ղարաի և Սարիղամիշի անցքերը ուժեղացրին կամավորական շարժումը: Հայրենասեր քաղաքներն ծառանում է վոչ միայն տաճկական պատերազմի յերևակայական վտանգի, այլև հեղափոխության անմիջական սարսափի դեմ: Կարճ ժամանակամիջոցում խմբապետ Սեպուհին հաջողվեց կազմել կամավորական մի գունդ մոտ 600 ձիավորից—գլխավորապես տաճկահայ գաղթականներից: Բացի այս նրա տրամադրությունն տակ էին դրված չորս վաշտ Յերևանի պահակային բաժնայինից և վեց թնդանոթ: Կանոնավոր մասերը բաժանվեցին անվտանգության էջին: Յերևանի կոմիտենիստները ագիտացրին աշխատանք էլին տարել այդ զինվորների մեջ: Ձինվորներից վոմանք խոստացել էին ապստամբների կողմն անցնել, հենց վոր կոմիտենան Ալեքսանդրապոլին, մյուսները վայր կարող էին դնել գնդերը առաջին լուրջ դիմադրության հանդիպելու դեպքում: Սակայն շոշափելի ուժ էին կամավոր խմբերը, նույնքան շոշափելի էին հակահեղափոխական այն ուժերը, վոր գործում էին ապստամբության թիկունքում: Դուրս պրծնելով կոմիտենիստների ձեռքից, դաշնակցականները «գործի» յեն անցնում մոլթ նկնդներում, խմբում իրանց շուրջը համակեր տարրերին և պատրաստվում նոր գոտեմարտի: Կարմիր ժապավեն հագած՝ գնդապետ Կորգանովը և իր համակիրները հակահեղափոխական ուժերի համադրվածությունը ապահով խողովակ են կազմում: Ալեքսանդրապոլում: Նույն գերի մեջ էին Փերուսումն ու իր արշանյակները Ղարսում: Մայիսի 13-ի լուսաբացին հեղափոխական բանակի ձիավորները առաջ շարժվելով կանգ են առնում Բայանդուրի մոտ ու նորից անգործություն մատնվում: Մինչև այդ թշնամու ուժերն, առաջանալով, գրավում են շրջակա բարձրությունները: Մուսայելյանն անպետք եր ուղղական գործողություններ դեկավարելու համար: Իսկ Կորգանովի վարքը սկսել եր արդեն լուրջ տարակուսանքների տեղիք տալ: Սոսվում է այն մասին, վոր հարկավոր է ավելի վստահելի մարդու հանձնել բանակի բախտը: Բայց արդեն ուշ եր: Ձինվորական մասերն սկսում են տրտնջալ պարենի կրճատման առթիվ: Բարոյալքվող զինվորների շարքերում հարձակման դիմելու դեմ դժգոհության նշաններ են յերևում: Դաշնակցական պրովոկացիան այդ մասին, վոր բուլղիկները դիտմամբ չեն բաց թողում ամերիկական վագոններ, վորպեսզի քաղցից նեղված ժողովուրդն ըմբոստանա, վոր ապստամբությունը ձեռնառու և միայն Ադրբեջանին ու Քեմալին, վոր Կարաբեքիր փաշան հարձակման հրաման է տվել իր զորքերին—այս բոլորը չեյին կարող չնպաստել զորքերի բարոյալքման: Հին հասկացողությունները չեյին կորցրել տակավին իրանց ազդեցությունը և ապստամբության ճգնաժամին պետք է անդրադառնային ուժերի փոխհարաբերությունը: Նորաստեղծ Կարմիր բանակը պատրաստ եր քաղաքական անարյուն: յայլքարի համար, սակայն տակավին չհասունացած քաղաքացիական

արյունոտ պատերազմների համար: Նկատելով աճող վտանգը՝ Հեղկոմում կարծիք են հայանում Լուռի կամ Ղաղախ քաղվելու մասին: Սակայն հաղթող ե դուրս գալիս այն առարկությունը, վոր լավ դեպքում նորադարձ զորքը վստահելի կարող է լինել հաղթական հարձակումի և վոչ՝ պարտված նահանջի համար: Քաղաքական դաստիարակությունից զուրկ, քաղաքացիական կոնֆլիկտին անսովոր, հողի և ոջախի կարոտով լեցուն, կիսաքաղց ստամոքսով՝ հայ զինվորները չեյին կարող հաշտվել Վրաստանի կամ Ադրբեջանի սահմանագրվելու քաղվելու հրամանի հետ:

Մինչև այդ տեղեկություններ են ստացվում, թե դաշնակցական խմբերը, թալանի յենթարկելով պարենի ու սերմանման պահեստները, մոտենում են Ալեքսանդրապոլին և արդեն հասել են քաղաքից հինգ վերստի հեռավորություն վրա գտնվող գյուղերին: Սրտապնդված այդ հաջողությունից, մայիսի 13-ին Բեհբուդյան փողոցում դաշնակցական տեղորիստները առճանակի հարվածներով մահացու վերքեր են հասցնում ապստամբության կողմն անցած գնդ. Սաջատյանին: Դիտակցելով դրություն լրջությունը Հեղկոմը փորձում է բանակցություններ սկսել թշնամու հետ և ժամանակ, վաստակել ուժեր կազմակերպելու համար: Ուղիղ հեռագրաթելով Մեղրումյանը առաջարկում է Յերևանի կառավարության յենթարկվել Հեղկոմին ու այդպիսով խաղաղ վախճան տալ կովին... Յերևանից պատասխանում են, վոր Հեղկոմը խոսք կարող է բանալ միայն անձնատուր լինելու մասին: Հաղորդում էին անգամ այն դեկավարների անունները, վորոնք պետք է հանձնվեյին Յերևանի կառավարությանը: Ալեքսանդրապոլի դաշնակցականների, մենչևիկների և ես-երների ներկայացուցիչները սիրահոժար պատրաստակամություն են հայտնում Հեղկոմին «միջնորդի» դեր ստանձնել բանակցությունները հարթելու համար: Հեղկոմը համաձայնում է և «պատվիրակները», վորոնց թվում է... Ալեքսանդրապոլում գտնվող խմբապետ Սմբատը, ուղևորվում են Յերևան: Աղին կայարանում նրանք տեսնվում են Սեպուհի հետ, վորը հայտարարում է, թե կովի լիկվիդացիայի լիազորություններն իրան են վերապահված, և այդ հիման վրա առաջարկում է Հեղկոմին մինչև հաջորդ օրվա առավոտյան ժամի 6-ը անձնատուր լինել: Առաջարկվում եր առանց դիմադրության հանձնել քաղաքն ու զրահապատը: Փոխարենը խոստացվում եր յե ըաշխավորել ապստամբածների կյանքը և միջնորդել կառավարության առաջ մոլորվածների «ներման» համար...

Թշնամու առաջապահ մասերը մոտենում են մինչև այդ քաղաքին և անհանդիստ տրամադրություն առաջացնում բնակչության մեջ: Ձորաշարքերի բարոյալքումը ուժեղանում եր: Դիմադրության մասին, իհարկե, խոսք լինել չեր կարող: Մուսայելյանը կարգադրում է Ղաթաբիլիսայի և Դիլիջանի ուղղությամբ կանոնավոր նահանջի պատրաստություն տեսնել: Բայց մինչ կկատարվեր այդ կարգադրությունը, հորիզոնի վրա յերևացող հրթիռները հիշեցնում են թշնամու խեղդող ողակի մասին:

Մայիսի 13-ին թշնամին ուժեր եր կենտրոնացրել Ղաթաբիլիսայի ֆրոնտում և գրավել Ջաջուռի տոնելը: Մայիսի 13-14-ի գիշերը Ալեքսանդրապոլի մի վաշտ յետ շարտեց թշնամու ուժերը Որթաբիլիսայի մոտ: Բայց արդեն ուշ եր: Սոսք չեր կարող լինել կանոնավոր նահանջի մասին իսկ: Սյուսանյաններում, չնախադրուշացնելով անգամ մերձավոր ընկերներին, Հեղկոմի անդամները թողնում են քաղաքը և հեռանում:

Կես գիշերին Կաղաչի պոստի կողմից քաղաք է մտնում դաշնակցականների հետախույզ գումարտակը: Մայիսի 14-ի լուսաբացին Ղաթաբիլիսայի

գործամասը Ձաջուռի կողմից գրավում և կայարանը: Կես որվա ժամի 2-ին Սեպուհի բրիգադը մտնում և Ալեքսանդրապոլ:

XIV

Ապստամբության աստղը թեքվել էր Ղարսում մայիսի 12-ին: Մայիսի 12-ի առավոտյան «Հայրենիքի Փրկութեան Կոմիտեն» Ղարսի քաղաքայիններին միտնելիս չէ հրավիրում: Այստեղ վորոշվում և ընդհանուր թափուրով շարժվել բոլորներին կայանը, առաջարկել Հեղկոմիտեի լիկվիդացիայի յենթարկել ապստամբությունը ու հեռանալ Ղարսի շրջաններից: Նկատելով Ալեքսանդրայան փողոցով շարժվող թափուրը՝ պատճառը հասկանալու համար բերվում ամբողջածները մի վաշտ զինվորների հետ քաղաք են ուղարկում գնդացիներով զինված յերկու բեռնատար ավտոմոբիլ: Բեռնատարներից մեկը, առաջ ընկնելով, մոտենում և թափուրին և, սպառնալով կրակ բացել, առաջարկում և իրավել: Գաղափար ամբողջ համառում և ու, պատենդ դարձնելով գաղթական: Կանանց և վորքերին, գրավում և ու զինաթափ անում բեռնակիրը: Հաջորդությունից խրախուսված՝ խուժանի միջից կրակ են բաց անում յերկրորդ բեռնատարի և հետևել վաշտի դեմ: Սրանք պատասխանում են: Նկատելով քաղաքում սկսած հրացանաձգությունը, բերդից թնդանոթային կրակ են բաց անում քաղաքի վրա: Կռիվը տաքանում և, բայց շուտով պարզվում և, վոր զորքի մեծ մասը, հատկապես Շատիրովի ֆորտում գտնված զինվորները, հրաժարվում են ուժակոծել քաղաքը, առաքելում են, վոր քաղաքում հարադատներն են գտնվում, վոր դեմ են «հայի» արյուն թափելուն, անգամ, յեթե «հայը» դաշնակ լինի և նրա արյունը՝ դաշնակի արյուն: Վտանդ կար, վոր ապստամբության դավաճանները կարող են նույնիսկ թնդանոթ ուղղել հավատարիմ ֆորտերի դեմ: Նախատեսելով այդ, ապստամբ մասերի հրամանատար Մելիքյանը դադար և տալիս քաղաքի ուժակոծությունը և մինչև նույն որվա ժամի 5-ը անձնատուր լինելու վերջնագիր ներկայացնում զինամորթներին: Ցանկանալով ժամանակ կորզել՝ դաշնակցականները խոստանում են պատասխանել վերջնագրին հաջորդ որվա, մայիսի 13-ի, առավոտյան ժամի 9-ին: Այդ պատասխանից հետո, նախազգուշանալով Շատիրովի դավաճանությունից, Մելիքյանը կենտրոնացնում և հավատարիմ մասերը Բուչկիևի ֆորտում և հրամայում ուժակոծել այստեղից քաղաքը, կայարանը և այլերորդը: Սակայն թնդանոթաձգությունը յերկար չի տևում: Հացի և ջրի բացակայությունը ու զորքերի մեջ աճող բարոյալքումը հարկադրեց ապստամբության ղեկավարներին մայիսի 12—13-ի զիշերը բեռնատար ավտոմոբիլներով ճգել դաշնակցականների ողակը և 17 հոգով մուտկան Ձախմախ գյուղի վրայով անցնել Մացրա: Այստեղ գյուղի ծխատեր քահանան, դաշնակցական խմբի ղեկին անցած, զինազրում և փախչողներին: Ջարդ տալով դաշնակցական տերտերին, Ղարսի կոմմունիստները 70 վերստ լեռնային ճանապարհ են կտրում ու հասնում Արփաչայի վրա գտնվող Արգինո գյուղը: Վրա յեն հասնում Ղարսից հեռավորագույն բեռնատարները և գետի մյուս ափից հրետանու կրակ բացում նահանջողների վրա: Տար կռիվ և սկսվում, վորտեղ վերջիններս բռնում են գետի կամուրջը և, ինչպես վկայում և դաշնակցական հաղորդագրությունը, «փայլուն զինազրություն» ցույց տալիս հարձակվողներին: Սրանց միանում են տաճկահայ զինված գաղթականները: Հարձակման զիմելով թիկունքից, վերջիններս սպառնում են գերի վերցնել զինազրող կոմունիստներին: Վրա յե հասնում մութը: Ոգտվելով զրանից՝

կոմունիստները թողնում են կռիվ դաշտում ութ դիակ—զրանց թվում նաև Ղարսի ապստամբությունից ղեկավար Ղուկաս Ղուկասյանին—ու հեռանում:

Մայիսի 14-ին ապստամբությունը պարտված էր Ալեքսանդրապոլում ու Ղարսում: Այս հանգամանքը վճռում էր նաև կղզիացած Սարիղամիշի ճակատագիրը: Հեղափոխական իշխանությունը շարունակեց այստեղ յի գոյությունը մինչև մայիսի 18-ը: Ալեքսանդրապոլի և Ղարսի անկումից հետո այստեղ խոսք կարող էր լինել կամ անհավասար ուժերի զիմադրություն կամ անձնատուր լինելու մասին: Ապստամբած մասսաները կոտորածից ազատելու համար հեղկոմը նախընտրում և վերջին ճանապարհը:

XV

Ապստամբությունը լիկվիդացիայի շրջան էր մտել Ալեքսանդրապոլում և Ղարսում, յերբ այն ծայր առավ Հայաստանի մի ուրիշ վայրում՝ Նոր Բայազետում: Մայիսի 6—7-ին Յերևանում տեղի ունեցած ձերբակալություններից խուսափած Արմենկոմի անդամները Ալանվերդյանի ղեկավարությամբ փորձում են շարունակել իրանց աշխատանքները բռնկած ապստամբությանը նպաստելու համար: Ազդրեջանի վերջնագրի շուրջը տարվող պրովոկացիայի առաջն առնելու համար մայիսի 8—9-ին Արմենկոմը ապագրություն տվեց մի թուղցիկ, վոր սակայն, տպարանը կնքվելու պատճառով, չի հաջողում ցրվել: Կոմիտեն կապ և հաստատում Քանաքեռում գտնված զորամասերի հետ, սակայն տեղեկացնում են, վոր զինվորները վարանումների մեջ են և հարկավոր և դեռ նախապատրաստական աշխատանք տանել: Այս նշանալիում էր, թե մայրաքաղաքում անհնարին և դեռ վորտեղ շարժում առաջացնել: Ավելի նշատալու էր գրությունն իզգիլում: Կուսկոմի տրամադրություն տակ այստեղ կար ուժեղ զինվորական կազմակերպություն ու վստահելի մի զորամաս: Պահեստներում բավականաչափ մթերք կար, պահեստները գտնվում էին կոմմունիստ ընկերների ձեռքերում: Արմենկոմն ապստամբության հրահանգ և ուղարկում: Տեղում կազմվում և ազգա-հեղափոխական կոմիտե, վոր նախապատրաստվում և գրավել իշխանությունը: Սակայն վրա յեն հասնում ձերբակալությունները և չեղոքացնում ակտիվ կոմմունիստներին: Տասը հոգուց բաղկացած ապստամբական շտաբը փոխադրվում և Յերևանի բանտը:

Ավելի հաջող ընթացք ունեցան Արմենկոմի ջանքերը Նոր-Բայազետում: Ապստամբություն կազմակերպելու հրահանգով Արմենկոմը Նոր-Բայազետ և ուղարկում այդ շրջանին լավ ծանոթ Հովհաննես Սարուխանյանին: Կոմմունիստական աշխատանքը Նոր-Բայազետում Բաղիկ Բաղիկյանի և Հովհաննես Սարուխանյանի ղեկավարությամբ կազմակերպական հունի մեջ էր մտել դեռ նախորդ տարվա հոկտեմբերից: Կուսակցության ազդեցությունը ցեղամիջյան ջարդերի ու դաշնակցական քմահաճույքների ծանրությունը ճաշակած այս շրջանում այնքան և զորեղանում, վոր, նկուղներից դուրս գալով, կոմմունիստները լեզու աշխատանքի հնարավորություն են ձեռք բերում: Քաղաքում ստեղծվում և 5 բջիջ, վորոնցից մի յերկուսը՝ զինվորական: Յուրաքանչյուր շաբաթ բջիջներում հավաքույթ էր լինում: Քաղաքի կազմակերպիչները կուսակցական աշխատանք են սկսում գավառամասերում: Գյուղերում կազմակերպվում են հեղհետե մոտ 15 բջիջ: Ղարանլուխի գավառամասում, վորտեղ այդ ժամանակ գեն. Միլիկովի հրամանատարություն ներքո կենտրոնացած էին դաշնակցական զորամասեր, կուսակցական աշխատանք

եր տարվում նաև զորաշարքերում: Դավառում կազմակերպությունը բժիշկներ և ստեղծում պոստ-հեռագրական հիմնարկներում և այդ ճանապարհով կապ և ստեղծում թե գաղափարների (Նոր-Բայազետ, Բասարգեչար, Ղարանլուխ) և թե զբոսի (Յելենովկա, Դիլիջան, Յերևան) հետ: Ղարանլուխի ռադիո-կայանի կոմմունիստ աշխատակցի միջոցով կազմակերպությունը կարողանում էր իրազեկ լինել աշխարհի անց ու դարձերին:

Հայաստանում սկսված հետապնդումների ժամանակ դաշնակցականները ձերբակալում են և դավառի սահմաններից հեռացնում շարժման ղեկավարներին, վորոնց թվում նաև Սարուխանյանին: Ադրբեջանի սովետիզացիան այստեղ ևս բարձրացնում է մասսաների հեղափոխական տրամադրությունը: Դաշնակցականները փորձում են խեղդել այդ տրամադրությունը և հրահանգում են խմբապետ Համադասպին Բասարգեչարի կողմից «զբաղեցնել» սահմանամերձ Ադրբեջանի թուրքերին: «Պանծալի» խմբապետը զորաշարժի հրաման և տալիս: Սակայն նրա տրամադրությունն տակ յեղած 400 զինվորների ու կամավորների մի մասը, տրանջալով պարենի քչություն առթիվ, լքում և դիրքերը և շարժվում Ներքին Ղարանլուխ գետ: Սիլիկովի շտաբը, վորտեղ այդ ժամանակ, մայիսի 11—13-ին, իր վերադարձի մասին բացատրություններ տալու համար կանչվել էր, ի դեպ, Սարուխանյանը: Տեղեկանալով ըմբոստացած զինվորների մասին, Ղարանլուխի կոմմունիստներից մի քանիսը, Սարուխանյանի հրահանգով, ագիտացիա յեն սկսում նրանց շարքերում, աշխատելով քաղաքական բնավորություն տալ հուզմունքին: Յերևու որվա նախապատրաստական աշխատանքը ապարդյուն չի անցնում: Ղարանլուխի զորամասերը միանում են Բասարգեչարի զինվորներին, շարժումը ստանում և ապստամբության կերպարանք: Կամենսկով հանդատացնել հուզված մասերը, զինվորական պետերը միտինգ են գումարում և հորդորում. «Հանգստացե՛ք, — կտանք, ինչ ուզում եք»: «Վոչինչ չենք ուզում, մենք վիստ ենք ուզում, գոռում են զինվորները և հարձակում գործելով սպաների վրա, սկսում են պոկել նրանց շողշողուն ուսադիրները:

Թեթև հրացանաձուլությունից հետո մայիսի 13-ին, յերևույան, Ղուրանլուխում Սուրխանյանի ղեկավարությամբ կազմակերպվում է Ռազմա-հեղափոխական կոմիտե, 24 հոգուց բաղկացած, վորի մեջ մտնում են միքանի ռիթեր և 4—5 կոմմունիստ: Կոմիտեյի կարգադրությամբ գետն. Սիլիկովը իր շտաբով ձերբակալվում են:

Այնուհետև ապստամբ զորքերը շարժվում են Նոր-Բայազետ: Նոր-Բայազետը տակավին սպասողական դրություն մեջ էր: Լուր ստանալով Ղարանլուխի ապստամբության մասին, մայիսի 15-ին դաշնակցականները ձերբակալում են քաղաքի աչքի ընկնող կոմմունիստներին, թվով 13 հոգի, և ուղարկում Սևան: Միաժամանակ, Յերևանից ստացված հրահանգով, տեղում կազմակերպվում է «Ինքնապաշտպանություն» մարմին, վորի շուրջը խմբվում են ունեւոր քաղքենիներն ու միլիցիայի մի մասը: Բնակչության մեծ մասի համակրանքը ապստամբների կողմն էր: Քաղաքի ուղղությունը շարժվող զորամասերին գյուղացիները զիմավորում են կարմիր զրոշակներով: Ով գետն ուներ, միանում էր ապստամբած զորամասերին: Մայիսի 17-ին հեղափոխական այս ուժերը, մոտենալով քաղաքին, յերևու ժամվա հրացանաձուլությունից հետո փախցնում են «Ինքնապաշտպանություն» ստանի ընդ Յելենովկայի կողմը: Քաղաքում հաստատվում է հեղափոխական կարգ: Մայիսի 18-ին քաղաքից ուղարկված հետախույզ խմբերը Հաջի Մուխանի շրջանում նկատում են Յերևանից վրա հասած դաշնակցական

կամավոր խմբերին ու կանոնավոր զորամասերին: Նույն որը ապստամբները գրավում են քաղաքից 4-5 վերստ հեռավորության վրա գտնվող դիրքերը Դիլիջան տեղի յե ունենում դավաճանություն: Ապստամբ ուժերի հրամանատար կարգված վոմն Հայկ Գրիգորյանը ազատ և արձակում գետն. Սիլիկովին և իր հետ ձերբակալված զինվորականներին: Միաժամանակ պատրվակ բռնելով դիլիջանից ցուրտը, տուն և ցրում դիրքերի զինվորներին, իսկ ինքն անցնում թշնամու կողմը: Տեղականալով այդ մասին, հեղկոմը ժողովում և նորից զինվորներին ու կամավորներին և դիրքերը վերադրավելու հրաման տալիս: Սակայն մինչայդ դաշնակցականներն առաջ էյին յեկել ու բռնելով այդ իսկ դիրքերը, հարձակում սկսել քաղաքի ուղղությամբ: Մայիսի 19-ին, առավոտը, վերսկսված այդ կռիվը, չնայած համառ դիմադրության, վերջանում է հեղափոխական ուժերի պարտություն: Այստեղ ճակատադրական դեր է կատարում դավաճանություն մի յերկրորդ դեպք: Այլ թեին ոգնություն ուղարկված սպաներից մեկը, ծալյալ դաշնակցական, բաց է անում հեղափոխական ֆրոնտը և ինքը 25 ձիավորով անցնում թշնամու կողմը: Բանակը լքում է դիրքերը: Դիմադրությունը շարունակվում է միայն ձախ թեի վրա: Կոմմունիստական մի գումարտակ, բաղկացած գլխավորապես Դալիկարդաշի գյուղացիներից ու կոմբիլի անդամներից, կարողանում է նույնիսկ յետ մղել թշնամու առաջխաղացումը: Բայց նկատելով նրա կողմից շրջապատվելու վտանգը, պատռում է թշնամու ֆրոնտը և նահանջում լեռները:

Կեսորին թշնամին մտնում է քաղաք: Մինչև ուշ յերեկոն կատաղի խուզարկությունը «խռովարաների» վորս և սկսում: Թալանն ու բռնուցքը, բանտն ու աքսորը «հանգիստ» են բերում հուզված քաղաքին: Փաշաքենդ գյուղում ձերբակալվում է ապստամբության ղեկավար Սարուխանյանը: Մերկացնելով նրան, յերևու ձիավոր քարշ են տալիս նրան քաղաքի փողոցներով և, բրածեծ անելուց հետո, նետում են բանտ: Միքանի որից նրան դուրս են հանում բանտից և շրջակա ավերված թուրք գյուղերից մեկի մաս գնդակահարում: Կարծես բավական չեղան հեղափոխականին հասցրած ֆիզիկական տանջանքները: Դաշնակցական լեգեոնյան փորձ արեց ցեխ նետել անգամ նրա պայծառ հիշատակին, հայտարարելով ի լուր հավատացյալների, թե մահից առաջ նա, «զղջացել» է իր բոլոր մեղքերը...

XVI

Նոր-Բայազետի դեպքերից հետո յեր, յերը նոր ուժով ապստամբություն բռնկեց Իջևանի գավառում: Շարժման համար այստեղ, հատկապես Ադրբեջանին մերձակա շրջաններում, պարարտ հող կար: Տնտեսապես և հաղորդակցության պայմաններով Իջևանի հայ գյուղերը կապված էյին սահմանի այն կողմը գտնվող Ղաղախի և Աղստաֆայի հետ: Իրանց հերթին Ադրբեջանի քոչվորները կապված էյին սերտորեն Հայաստանում գտնվող յայլադներին հետ: «Անկախություն» հռչակչություններից Հայաստանի և Ադրբեջանի միջև ստեղծված քաղաքական անջրպետը դժվարահաղթ խոչընդոտներ էր ստեղծում հատկապես Ղաղախի և Իջևանի գյուղացիների ու խաշնարածների առաջ: Դավառը սնվում էր մեծ չափով Ղաղախից ներմուծվող հացով: Փակելով սահմանը, դաշնակցականները նպաստում էյին հացի թանգություն: Նույն քաղաքականությունից տուժում էր մեծապես նաև Ադրբեջանի խաշնարածությունը: Մասսաները չէյին գիտակցում «բարձր նկատառումներով» կառուց-

ված պատվարի անհրաժեշտությունը և բացարձակ տրանշում էլին «հարազատ» իշխանավորների վարած քաղաքականությունը դեմ:

Տրտունը խլացնելու համար Հայաստանի և Ադրբեջանի տիրող կուսակցությունները ստեղծում էին ազգայնական ջարդերի մթնոլորտ: Այդ մթնոլորտում էր, վոր պիտի հասունանար «ազգային ինքնագիտակցություն» ու «հայրենի ոջախի» պաշտպանության փրկարար մղումը: Մասնավորապես ակնհայտ էր այդ տեսակետից դաշնակցականների թափած պրովոկացիոն աշխատանքը: Ցանկանալով վառ պահել գյուղացիության մեջ ազգայնական կրքերը, դաշնակցականները դիմամամբ փամփուշտ էին բաց թողնում վտանգված Շամշադինին, հնարավորություն տալով Ադրբեջանի դոչիններին հրդեհելու այդ շրջանում Կոթիքենդ, Կուրուսուսու, Դովեշ և Դոչոթան գյուղերը: Պակաս ծանր չէին գյուղացիների ներքին հարստահարությունները: Հացի պակասը գյուղական վաշխառուների ու հացատերերի իշխանության տակ էր դնում գյուղի չքավորներին: Ադմինիստրացիայի հետ համերաշխ անտառներում վխտացող ավազակային խմբերը թալանում էին գյուղացու վոչխարն ու յեղը, գոմեշն ու ձին: Կոթիքենդ գյուղը դարձել էր վոչխարի ու տավարի շուկա և գողերի ու նրանց պարտակող վոստիկանության հաշվհարդարի մշտական ժամադրավայրը:

Հասկանալի չէ, թե ինչու հատկապես հենց այս շրջանի չքավոր գյուղացիությունում էր, վոր հաջողություն ունեցավ կոմունիստական աշխատանքը: 19 թվի վերջերին և 20 թվի սկզբներին կազմակերպական ընդհանուր ցանցի մեջ են մտնում Դիլիջանի, Ճառխեշի, Իջևանի և Բաբանայի առաջին կոմունիստական խմբակները: Խմբակների մեջ մուտք են գործում գյուղացիներ, զինվորներ, Բագվից վերադարձած բանվորներ, ուսուցիչներ և այլն: Կոմունիստների և համակիրների թիվը Դիլիջանում հասնում էր միքանի տասնյակ հոգու: Սակայն ավելի ուժեղ էին կուսակցական բջիջները Ղազախի հարևան գյուղերում: Կոմունիստական բջիջները գործը ձևավորում է մանավանդ, յերբ կուսակցական աշխատանքը ղեկավարելու համար հունվարի վերջերին պատասխանատու կազմակերպողի պաշտոնով դավառ և գալիս ընկ. Շ. Ամիրխանյանը: Վերջինս ուշաուռ և լինում զինվորական մասերին, կապ է հաստատում 6-րդ գնդի ֆելդֆելել Հակոբջանյանի և ուրիշների հետ և սրանց միջոցով ղեկավարում զինվորների շրջանում սկսված աշխատանքը: 15 անդամից բաղկացած զինվորական բջիջը շուտով ազդեցություն է ձևառ բերում ամբողջ գնդի վրա: Միլիցիական գնդի մեջ, վոր տեղավորվում էր Իջևանում և Սև-Քարում, կոմունիստական բջիջի զինվորները թիվը հասցրվում է 30 անդամի:

Բանտն ու աքսորը ծավալվող կոմունիստական աշխատանքն անվտանգ դարձնելու անդոր միջոցներ յեզան նաև այս գավառում: Ապրիլի 25-ին Քյուրդովանում գումարված գավառական կազմակերպության գաղանի կոնֆերանսը գալիս էր արձանագրելու կոմունիստների աճող ազդեցության փաստը և կազմակերպչական ու ազդեցիկ աշխատանքի նորանոր ուղիներ հարթելու: Փանի մոտենում էր հեղափոխական Կարմիր բանակը Հայաստանի սահմաններին, այնքան աճում էր գործի ու գյուղացիությունում մեջ «ուսասան» տրամադրությունը, գործնում կոմունիստների ազդեցությունը ժողովրդական լայն մասսաների վրա: Կառավարության տարտամ ու յերկշտ քաղաքականությունն այդ միջոցին՝ հասունացող հեղափոխության հայտարարն էր: Ադրբեջանի սովետիզացիայից հետո Գանձակի շրջանն ու վրացական սահմանագլուխն ամբողջով համար Ղազախում ու Աղստաֆայում կենտրոնացող

XI Բանակի 32-րդ զիվիզիայի մերձավորությունը ուժեղացրեց մասսաների հեղափոխական տրամադրությունը: Գյուղացիները փրկություն էին սպասում «յեղող ուսաներից», պատրաստակամություն հայտնում վոտի յեղնել դաշնակցական կառավարության դեմ, հենց վոր յերաշխիք տրվի, թե «ուսար» վոտը պիտի դնի «հայի հողը»: Գրեթե ամբողջովին կոմունիստների ազդեցությանը յեթարկվող հայկական 6-րդ գնդի զինվորները պահանջում էին տալու անմիջապես կառավարությունը և խորհրդային կարգեր հռչակել:

Ադրբեջանի սովետիզացիայից հետո գավառի կուսակցական աշխատանքը ղեկավարող ընկերների համար հերթական և դառնում իշխանությունը գրավելու խնդիրը: Հրահանգներ ստանալու նպատակով գավառական կոմիտեի անդամներից մեկը մեկնում է Յերևան: Մայիսի մեկի նիստին Արմենկումը ռազմական նախապատրաստություններ տեսնելու հրահանգ է տալիս Իջևանի կազմակերպության: Յերևանից Ալեքսանդրապոլ անցնելով, Իջևանի կազմակերպության ներկայացուցիչը Հայաստանի նորակազմ Հեղկոմից մայիսի 7-ին հրահանգ է ստանում, ապստամբությունն սկսվելուն պես փակել Սեմյոնովսկի լեռնանցքը և Դիլիջանի վրայով շարժվել Ղարաբախի: Խոստացվում է հատուկ մարզու միջոցով նշանակել ապստամբության որը:

Մայիսի 12-ին մասնավոր լուր ստացվեց Ալեքսանդրապոլում տեղի ունեցած հեղաշրջման մասին: Սակայն Դիլիջանի և Իջևանի ընկերները սպասում էին դեռ խոստացված ազդանշանին: Մայիսի 15-ին տեղեկություն ստացվեց Ալեքսանդրապոլի անկման մասին: Նույն որը Դիլիջանում և Իջևանում կառավարությունը սկսում է ձերբակալել կոմունիստներին: Ղեկավարներից վոմանք թագնվեցին անտառներում: 6-րդ գնդի ամենից «անբարենույս» մի վաշտը Հակոբջանյանի հետ փոխադրում են Սև-Քար, յենթադրեք լով ազատել այն Դիլիջանի քայքայող ազդեցությունից: Սակայն Ադրբեջանի մերձավորությունը փաստորեն կամուրջ դարձրեց այդ վաշտը հեղափոխական ուժերի առաջխաղացման համար:

Ալեքսանդրապոլի անկման մասին յեղած լուրերը կոմունիստական շրջանում դաշնակցական հերյուրանք էին համարվում: Թերահավատությունը, բացատրություն և գտնում սուրության և կեղծիքի այն մթնոլորտում, վոր կառավարական ազնետների համար դառել էր հեղափոխությունը խեղդելու միջոց: Հակահեղափոխական պայքարի վտանգավոր զենք դարձավ մանավանդ կառավարական պրովոկացիան այն մասին, վոր իբր Հայաստանի սահմանագլխին յերեվացած ուս գործադանքը խորհրդային մասեր չեն, այլ թուրքերից վարձված դենիկինյան զորքեր: Դյուրահավատ գյուղացիների շրջանում պրովոկացիան յերկմտություն և առաջացնում, հանգամանք, վոր վճռական այդ որերին չափազանց ձեռնտու յեր դաշնակցականներին: Հաշվի առնելով այդ իր հերթին ընկ. Ամիրխանյանը ևս դիմում է Բագու Կովկասյան ձախտի ռազմահեղափոխական խորհրդի նախագահ Որջոնիկիձեյին և խնդրում, թեկուզ ցույցի համար, կարմիր գործադանք ուղարկել Հայաստան: Նկատի առնելով յերկրի ապստամբական վիճակը, ռազմահեղափոխական խորհուրդը մայիսի 17-ին հրաման է ուղարկում Ղազախի շրջանում գտնվող 32-րդ զիվիզիայի յերկու հեծելազորներին անցնել Հայաստանի սահմանը: Լուր ստանալով այդ հրամանի մասին, գավառային ընկերները կազմակերպում են Ռազմահեղափոխական կոմիտե և վճռում գրավել իշխանությունը:

Ապստամբության նախապատրաստական աշխատանքի համար Շամշադնի շրջանն ուղարկված վոմն Բերբերյան, չսպասելով գավկոմի կարգադրության, տեղական ուժերով գրավել էր իշխանությունը: Անգլուխ հրամաններով իբ

դ'ա՛մ գրգռելով շրջանի գյուղացիներին, Բերբերյանը հնարավորություն է տալիս դաշնակցականներին մայիսի 18-ին խեղդել Շամշադնի «ապստամբությունը» և նորեկ գրության տեր դառնալ շրջանում: Սակայն հաջորդ օրը, մայիսի 19-ին, գավառային հեղկոմի վորոշմամբ ապստամբում են Սև Քարում տեղավորված 6-րդ գնդի 2-րդ վաշտը և մի բատարեյ և նույն օրը, շարժվելով Իջևանի ուղղությամբ, միանում այստեղ գտնված զորամասերի հետ: Տեղեքում կազմակերպված հեղկոմները հեղափոխական կարգ են ստեղծում: Իջևանում ձեռքակալվում են Յերևանից ժամանած «արտակարգ հանձնաժողովի» անդամ Նախկին մինիստր Ս. Մանասյան, գեներալ Բաղդասարյան, Մեսրոպ Բեկ Սարատրիկով, 1918 թ. Բազմվում տխուր հուշակ վաստակած բիշերախոսիկյան ազնեո դաշնակցական Ներսես Զաղեթյան և այլն:

Մայիսի 20-ին ապստամբ զինվորների հրավերով Իջևան են մտնում ուսական հեծելազորները և խանդավառ ընդունելությամբ դառնում գյուղացի ազգաբնակչության կողմից: Բնորոշ ե այդ պահին դաշնակցական Ս. Մանասյանի արած հայտարարությունը. «Մեծամասնականների դեմ մենք վռչինչ չունինք, կենտրոնական կառավարությունն ինքը կհրաժարվի իշխանությունից՝ թե իմանա վոր իրոք կարմիր զորքերն են Հայաստան մտել: Արյուն թափել մենք չենք ցանկանա. քանի վոր միևնույն ե հայ ժողովուրդը չի կամենա կռվել կարմիր զորքերի դեմ»: Թե իրոք Հայաստան են մտել կարմիր զորքերը՝ այդ մասին ուղիղ գծով հաղորդեց Յերևանի կառավարությանը նույն Մանասյանը: Բայց, ըստ յերևութին, Յերևանում «հայ ժողովրդի» խնամակալներն ավելի փափուկ բարձերի վրա ելին նստած, քան նրանց ներկայացուցիչներն Իջևանում, ուստի և Մանասյանի հաղորդագրությունը մնաց անպատասխան....

Մայիսի 21-ին ապստամբած հայ զորամասերի հետևից ռուսական մի հեծելազունդ մտնում է Ճառխևիչ և Նուլյն ուրբ, առավոտյան, Դիլիջան ե մըտնում Սեպուհի առաջապահ գնդերից մեկը։ Իրիկնադեմին, առաջ շարժվելով Դիլիջանի ուղղությամբ, հայ զորամասերը թեթև հրացանաձգությունից հետո դուրս են քշում քաղաքից դաշնակցականներին։ Հայկական 6-րդ գունդը միտնում է ապստամբներին։ Այնուամենայնիվ գրությունը դեռ անորոշ եր։ Քաղաքում վստահություն չկար, թե Ճառխևիչ հասած ռուս զորամասերն իրոք կարմիր բանակախններ են և վոչ՝ կողակներ կամ դենիկինյան զինվորներ... Պրովոկացիայի առիթ ծառայեց մանավանդ քաղաքում սպանված մի թաթար կարմիր բանակայինի մերկանդամ դիակը։ Քաղքենու աչքում դա շոշափելի արդարացումն էր դաշնակցականների այն պնդումին, թե յեկվոր ռուսները ծալտյալ թուրքեր են...

Հայորդ որը Սեմյոնովկայի կողմից Դիլիշանի ուղղությամբ շարժվում են դաշնակցական կամավոր խմբեր և կանոնավոր մի զորամաս գննւ. ինան- քալամյանի հրամանատարութեամբ: Դիմադրութեան պայմաններն աննպաստ էլին չենց հուլյն որն եր, վոր կարմիր հեծելազնդերին հրաման յեղալ Բագվից Հայաստանի սահմանները թողնելու մասին: Ռոստովից Մոսկվա յեր ուղևոր- վել Հայաստանի կառավարութեան այն պատվիրակութեունը, վոր բանակ- ցութեաններ պիտի վարեր խորհրդային Ռուսաստանի հետ: Ալեքսանդրա- պոլի և Դարսի աղտառածութեան մասին ստացված տեղեկութեանները գալիս էլին մինչայդ վկայելու հեղափոխութեան կրած պարտութեան մա- սին: Այսպիսի պայմաններում կարմիր բանակի միջամտութեունը ներհա- կում եր Մոսկվայի քաղաքականութեան, և այն յետ եր կանչվում: Հուլյս դնել տեղական ուժերի վրա՝ ղժվար եր ստեղծված հանգամանքներում: Հեղկոմը 24 ժամվա զինադադարի առաջարկ և անում թշնամուն: Ստաց-

վում է բացասական պատասխան: Մյնուամենայնիվ, կոմմունիստ զինվորականների առաջարկով, վորոշվում է առաջ քաշել 6-րդ դնդի վստահելի մասերը և դիմադրել: Սակայն ապարդյուն: Գիշերը, մայիսի 22—23-ին թշնամին քաղաք է խուժում: Սպանվում կամ գնդակահարվում են մի շարք կոմմունիստ ընկերներ, վորոնց թվում՝ Հակոբջանյան, Ալեքսեյև, վաղինակ և այլն: Մյուսները ձերբակալվում են կամ փախուստի դիմում: Սկսված խուճապը հնարավորութլուն է տալիս հակահեղափոխական խմբերին առաջ շարժվել և, հուր ու սուր տարածելով ճանապարհին, մայիսի 24-ին գրավել Իջևանը: Ապստամբութլան հարած գլուխացիների մի մասը, թվով 1500 հոգի, գեներ ձեռին անցնում է Ադրբեջանի սահմանը, մատնելով տունն ու ունեցվածքը դաշնակցական զորքերի թալանին:

Հեղինակը պնդում էր կոխվել վերսկսելու անհրաժեշտությունը վրա: Կուսակցական Կովկասյան Բյուրոն տրամադրեց այդ նպատակին հրամանատարական փոքրիկ կազմ, պարեն ու դրամական միջոցներ: Բազմից վրա հասան մոտ 400 հայ կարմիր բանակայիններ: Հունիսի կեսերին այդ ուժերով փորձ է լինում վերցնել Իջևանը: Փորձը հաջողվում է, սակայն զորաշարժի խայտառակ ղեկավարությունը շնորհիվ, բանակը բարոյալքվում է և նրա գործը մատնվում կատարյալ անհաջողության: Ապստամբությունը լիկվիդացիայի յե յենթարկվում: Լքելով Հայաստանը, հայրուհավոր զինվորներ ու գյուղացիներ փոխադրվում են Բազու և կազմակերպում այստեղ սովետական Հայաստանի հետագա կարմիր բանակի անդրանիկ գունդը:

XVII

Հայաստանի մայիսյան ապստամբութիւնը կազմակերպչորեն սաղմնա-
վորվեց Կոմմունիստական Կուսակցութեան ընդհատակյա աշխատանքի ծո-
ցում: Բանվորական շարժումն այդ աշխատանքի մասնաշաղկան անդրանիկ
հայտարարն էր: Շարժումը բռնկեց մայիսին, ավելի մեծ թափով ու ծայր
տվեց զինվորական ապստամբութեան՝ Ալեքսանդրապոլում, Ղարսում և Սա-
րիզամիշում: Զինվորական ապստամբութիւնը Նոր-Բայազետում տեղահան
արեց գյուղական մասսաներին ու ստացաւ քաղաքացիական կռիւ կերպա-
րանք: Իշկանի շրջանում գյուղացիութիւնն ապստամբութեան գլխավոր
զսպանակն էր, վոր հեղափոխական յեռանդ հաղորդեց զինվորական շարժման:
Զինվորա-գյուղացիական այդ ապստամբութեան էր, վոր ոգնութեան էր
գալիս դրսից Կարմիր բանակի ռազմական ուժը:

Բանավորական, գինավորական և գյուղացիական լայն մի շարժում եր մայրաքաղաքի ապստամբությունը, վեր բռնեց Հայաստանի տարբեր վայրերում: Սրա մեջ եր ապստամբության ուժը, բայց և սրա մեջ եր նրա թուլությունն ու պարտությունն հիմնական պատճառը: Չկար քանակով և վորակով ուժեղ բանավորություն, վոր անցնելով մասսայական այդ շարժման առաջին շարքերը, իր գլխավորություններով կարողանար գոյն և ուղղություն տալ նրան: Չկար նաև կուսակցական զորեղ կազմակերպություն, վոր ղեկավարելով ապստամբական բովանդակ շարժումը՝ ապահովեր նրա հաղթությունը: Չկար նույնիսկ միասնական կամք ու վճռականություն, գործողությունների պայծառ հեռանկար ու համագործակցության ընդհանուր ծրագիր շարժումը գլխավորող կուսակցական կազմակերպության մեջ: Յեթե Արմենիկում քնասել եր ապստամբական շարժման, անգիտանալով մասսաների հեղափոխական տրամադրության փաստը, ապա կուսակցության Արեքսան

դրապուլի կենտրոնը, վոր ճշտորեն արձանագրեց այդ փաստը, գերագնահատեց նրա ինքնամփոփ նշանակությունը և ճակատադրական կերպով տարվեց բռնկած ապստամբությունն անաբյուն հաղթանակով պսակելու, ցնորքով: Կուսակցության Ալեքսանդրապուլի առաջնորդները հրահրել էյին բռնկած մասսայական շարժումը, սակայն անկարող յեղան կազմակերպական ընդհանուր հունի մեջ դնել այն, զեկավարել և առաջնորդել այն պայքարի և հեղաշրջման վճռական որերին: Այդ որերին Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն ղեկերում եր կրավորականության նույն տարտամ վիճակում, վորպիսի վիճակում ղեկերում եր կուսակցության Հայաստանի կենտրոնը որհասական պայքարի ու հեղաշրջման նախորդին: Հրաժարվելով քաղաքացիական կովից՝ Ալեքսանդրապուլի Հեղկումը շատացավ հակառակորդի հետ բացառապես քաղաքական բանակցություններ հարթելու հոգսով: Գերագնահատվում եր քաղքենու «ուսական որիննտացիայի» ավանդական ուժը: «Որիննտացիան», հիրավի, կարևոր միջոց եր սկսված պայքարը հրահրելու համար, սակայն անգոր, պայքարի բախտը կանխելու տեսակետից:

Անառազատ ու անդեկ ապստամբութիւնն ստացալ տարերային շարժման բնույթ: Առանց կապի և համագործակցութեան, մեկուսացած գաղա-
ռական շրջանակներում, այն ընթացալ վորպէս հաջորդաբար բռնկող և
հանչող տեղական շարժումների մի շարան: Ապստամբները հնարալուրու-
թիւնեցան ռազմական ուժեր փոխադրել մի վայրից մյուսը, մինչդեռ թշնա-
մու միեկնուէյն գնդերը հաջորդաբար պայքարի բռնվեցին հեղափոխութեան
ուժերի հետ շարժման տարբեր վայրերում: Դրսի ողնութեան բացակայու-
թիւնը, պարենային ներքին ճգնաժամը, կազմակերպող ուժերի պակասը,
զեկավարների անվճռականութիւնը, հրամանատարական կազմի գաղաճա-
նութիւնը, ազիտացիայի և պրոպագանդայի թուլութիւնը, հեռանկարների
անորոշութիւնը բարոյալքեցին քաղաքական դաստիարակութիւնից զուրկ
և քաղաքացիական կռիվներին անսովոր զինվորական և գյուղացիական
մասսաներին ու ճանապարհ հարթեցին թշնամու հաղթութիւնների ու վայ-
րագութիւնների առաջ:

Ապստամբությունը ճնշվեց սրի և հրի ուժով։ Մասսաների առաջնորդները բանտեր նետվեցին։ Վատնագավորներին չհղոքացրեց դահճների արգարագատուօթյունը։ Սոսկալի տանջանքներից հետո հրաքանադարկ յեղան Յեգոր Աւայան, Փանյան, Արտ. Մելքոնյան, Յենուկք Մկրտումյան, Բաղիր Բաղիրյան և ուրիշները։ Ռուբեն Փաշայի և Զիրխակարյանի հրամանով դադարողի գնդակահարում են և այրում տաժանակիր աշխատանքների դատապարտված Մուսայեկյանին, Ալլահվերդյանին և Ղարիբջանյանին։ Սկսվեց համատարած ոսակցիայի մի շրջան։ Խմբապետական բունդները կոչվեցին «Հայ քաղքենիություն» և իր կուսակցությունը տոնում էին հաղթանակի արյունոտ խրախճանք։ «Դիմադիր» կազմակերպությունները, հայ լիբերալներն ու մենշևիկները, սոցիալիստ-հեղափոխականներն ու «անկուսակցականները», հավատարմության տուրք տալով հայրենի «անկախության», բոլորեցին զեկավարող կուսակցության պարզած ազգային զրոշակի շուրջը ու հակա-հեղափոխական միասնական ֆրոնտ հարգարեցին Հայաստանի աշխատավորության և նրա մարտական կազմակերպության—Կոմունիստական Կուսակցության գեմ։

Կոմմունիստական Կուսակցութեան պարտութիւնը Հայաստանի աշխատավոր մասսաների պարտութիւնն էր: Վերահաս ռեակցիան, ներքին ջարդերի և արտաքին պատերազմի նոր պատուհանները, ակնբախ դարձրին կրած պարտութեան բոլորական իմաստը: Բայց մայիսյան ապստամբութիւնը հեղափոխական դատարարութեան դպրոց էր վոչ միայն Կոմմունիստական Կուսակցութեան, այլև Հայաստանի հարստահարվող աշխատավորութեան համար: Ապստամբութիւնը լուսավորել էր մասսաների առաջ հեղափոխութեան մեծ ճանապարհը: Յեկ այդ ճանապարհով է, վոր պիտի շարժվիր Հայաստանի աշխատավոր ժողովուրդը փորձութեան այն մոռյլ որերին, վոր վրահասան մայիսյան ապստամբութիւնից հետո:

Ապստամբութիւնը ցնցել եր հիմնիվեր տիրող պետականութեան շնորքը, խաբարել նրա առանց այն ել փլվող սոցիալական և իդեական հենակետները: Հայ բուրժուազիան և իր կուսակցութիւնները—դիմադիր թե ղեկավար—դիմում ելին դեպի քաղաքական անդունդի բերանը: Պատմական ճակատագիրը բաց և անում նրանց առաջ որհասական կյանքի վերջին մոռյլ եջերը:



52

3849

0005637

ՀՀ Ազգային գրադարան



NL0005637

